

Երեսնամյա այսպիսի

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց ՀՀ նորընտիր նախագահին

Փետրվարի 19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին՝ ՀՀ նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

«Ընտրություններում Ձեր հաղթանակը վկայում է, որ մեր ժողովուրդը տեսնում է Հայաստանի առաջընթացի ու զարգացման հեռանկարը, վստահում է վերափոխումների Ձեր ծրագրերին եւ գնահատում այդ ուղղությամբ Ձեր ներդրած ջանքերն ու նվիրումը, Հայրենիքին ծառայության Ձեր անցած ուղին ու վաստակը», - ասվում է շնորհավորագրում:

Նորին Սրբությունը մաղթել է, որ Սերժ

Սարգսյանի նախագահության երկրորդ շրջանը հայրենիքի համար լինի զարգացման բեկումնային ժամանակահատված, երբ մեր ժողովրդի կյանքը կընթանա անշեղ վերելքի ու բարգավաճման ուղիով, եւ կհաղթահարվեն հիմնախնդիրներն ու դժվարությունները:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների ուղեկցությամբ, այցելեց եւ հայրապետական իր օրհնությունը բերեց ՀՀ նախագահին: Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետը մաղթեց, որ Տերը զորացնի ՀՀ նախագահին եւ հայրենի իշխանություններին, նոր ձեռքբերումներ պարգևի երկրի շենացման, ազգային իղձերի իրագործման ճանապարհին:



Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Փետրվարի 19-21-ը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով՝ ընդլայնված կազմով: Ժողովի սկզբում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ԳՀԽ անդամներին՝ իրենց օգտակար ծառայության համար:

ԳՀԽ նիստերը նախագահեցին Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ Արիս արք. Շիրվանյանը եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթեշյանը: Ժողովում քննության առնվեցին նվիրապետական աթոռներին եւ թեմական կյանքին, Եկեղեցու հոգեւոր-կրթական, քարոզչական առաքելությանը, կանոնադրական ու ծիսական հարցերին վերաբերող մի շարք խնդիրներ:

Երուսաղեմի պատրիարքության ընթացիկ գործունեության վերաբերյալ գեկույց ներկայացրեց Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ Արիս արք. Շիրվանյանը՝ մասնավորաբար անդրադառնալով Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությանը եւ տեղեկացնելով, որ նորընտիր պատրիարք Նուրհան արք. Մանուկյանի ընտրության վավերացման

դիմումներն արդեն իսկ ուղարկվել են Իսրայելի, Պաղեստինի եւ Հորդանանի իշխանություններին: Մոտ ժամանակներս սպասվում է նրանց վավերացումը: ԳՀԽ անդամները գոհունակությամբ ընդունեցին գեկույցը՝ վերստին շնորհավորելով նորընտիր պատրիարքին եւ մաղթելով, որ Տերը զորացնի նրան՝ իր ջանքերով առավել պայծառացնելու պատմական Ս. Աթոռը:

Կ. Պոլսի հայոց պատրիարքության վերաբերյալ գեկույցով հանդես եկավ Կ. Պոլսի հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արք. Աթեշյանը: Փոխանորդ սրբազանը նշեց, որ Կ. Պոլսի Պատրիարք Մեսրոպ արք. Մուշաֆյանի առողջական վիճակը շարունակում է մնալ ծանր, եւ գտնվում է բժիշկների մշտական խնամքի ներքո: Արամ սրբազանը նաեւ մասնավոր անդրադարձ ունեցավ Թուրքիայում հայոց սրբավայրերի պահպանության եւ վերադարձման խնդիրներին:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի 2012 թ. գործունեության մասին գեկույց ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը՝ անդրադառնալով անցնող տարում Մայր Աթոռի կողմից ներկայացրած եւ միջնեկեղեցական ասպա-

րեզներում իրագործված ծրագրերին, Սբ Էջմիածնի քարոզչական, կրթադաստիարակչական եւ սոցիալական առաքելությանը: Տեղեկացվեց, որ 2012 թ. հրապարակվել է հայրապետական 57 կոնդակ, ձեռնարկվել 9 քահանա՝ 2 կուսակրոն եւ 7 ամուսնացյալ, ինչպես նաեւ՝ 35 սարկավագ: Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եկեղեցականների թիվը 668 է, որոնցից 56-ը՝ եպիսկոպոս, 33-ը՝ վարդապետ եւ ծայրագույն վարդապետ, 61-ը՝ արեղա, 423-ը՝ քահանա, 95-ը՝ սարկավագ, ովքեր ծառայում են Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու տարբեր կառույցներում: Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատություններում ուսանողների թիվը 220 է:

Մայր Աթոռի հովանու ներքո գործող յոթ հայրորդյաց տուն հաճախել է 5000 երեխա: Սոցիալական ոլորտում նոր կարեւոր ձեռնարկ էր Արաբկիրում «Նազգաշյան մանուկների տուն» կենտրոնի բացումը, որտեղ 10 տարեկանից բարձր 20 աղջիկ ստանում է մասնագիտական կողմնորոշում եւ սոցիալական աջակցություն: Անցնող տարում Մայր Աթոռի 51 բաժնի կենսագործունեությունն ապահովել է 1174 անձ՝ 142 եկեղեցական եւ 1032 աշխարհական:

Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց նաեւ եպիսկոպոսաց ժողովի

կազմակերպման հետ առնչված հարցեր: Վերահաստատվեց ժողովն առաջիկա սեպտեմբերին Մայր Աթոռում գումարելու որոշումը, եւ քննության առնվեցին ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ, Կանոնական հանձնախմբի համատեղապետ Խաժակ արք. Պարսամյանի, Տավուշի թեմի առաջնորդ, Սրբադասման հանձնախմբի համատեղապետ Եզնիկ արք. Պետրոսյանի եւ Մայր Աթոռի դիվանապետ եւ Ծիսական հանձնախմբի համատեղապետ Արշակ եպս Խաչատրյանի գեկույցները՝ առնչված եպիսկոպոսաց ժողովի օրակարգային նյութերին:

Ժողովի երկրորդ նիստին քննարկվեցին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Հայ Եկեղեցու կողմից իրականացվելիք միջոցառումների առաջարկները: Առաջարկների հանձնախմբի աշխատանքը ներկայացրեց Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը: Այս առնչությամբ ծրագրված միջոցառումները եւ այդ շրջանակներում Մայր Աթոռի հետ հնարավոր համագործակցությունը ներկայացրեց նաեւ Նիստին հրավիրված ՀՀ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը:

Շարունակությունը՝ էջ 2



Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Փետրվարի 15-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն:

Վարդապետական թեզեր պաշտպանեցին Մայր Աթոռի միաբաններ Սահակ արքեպ Շաքարյանը եւ Արիստակես արքեպ Այվազյանը՝ համապատասխանաբար՝ «Նոր Նախի-



ջեանի եւ Բեսարաբիայի հայոց թեմը» եւ «Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու երկերը հայ մատենագրության մեջ» թեմաներով:

Հանձնաժողովը նախագահում էր Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ եւ հրատարակչական բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս ժամկոչյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պռոշյանը եւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեորգ եպս Սարոյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ առաջիկայում Սահակ արքեպ Շաքարյանը եւ Արիստակես արքեպ Այվազյանը Օշակնի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տվչության հատուկ արարողությամբ կստանան մասնավոր վարդապետության աստիճաններ:

ԱՐԳԵՆՈՅԻ ԱՎԵՐՎԱԾ ԳԱՆՁԵՐԸ՝ ԱՂՋՈՅ ՎԱՆԵ

Խոսրովի պետարգելոցը Հայաստանի ամենագոյտրիկ վայրերից մեկն է: Յուրահատուկ բուսական եւ կենդանական աշխարհի ունեցող անտառը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի եւ Ուրծ, Երանոս, Դահնակ, Իրից, Խոսրովասար լեռների լանջերին: Դեռեւս IV դարում Մեծ Հայքի Խոսրով Կոտակ թագավորն այս հարուստ բնաշխարհում հիմնում է երկու նոր անտառ՝ Խոստովակերտը եւ Տաճար մայրին: Հետագայում, ի պատիվ Հայոց թագավորի, ամբողջ անտառը կոչվում է նրա անունով: Խոսրովի անտառը, արքայի եւ իշխանների որսատեղիից բացի, գինավարժությունների վայր է եղել: Այստեղ են կոփվել մեր խիզախ ռազմիկները եւ սրբավայրերում օրհնություն ստացել մարտերից առաջ: Խոսրովի անտառն իր մեկուսացած վայրի գեղեցկությամբ հրապուրել է նաեւ շատ հոգեւորականներ: Նրանք, հրաժարվելով աշխարհիկ կյանքից, ապրել են ժայռափոր խցերում:

Խոսրովի պետարգելոցը հարուստ է պատմական 112 բացառիկ հուշարձանով: 74-ն Արարատում են, 38-ը՝ Արտաշատի տարածաշրջանում: Սակայն 1679 թվականի հունիսի 4-ի երկրաշարժն ավերել է խոսրովի պատմական հուշարձանների մեծ մասը, որոնք մինչ այսօր մնացել են իբրեւ մասուկ՝ մեր ազգային ոգու հաստատման ու հարստեման:

Գեղարդավանքից 7 կմ հարավ-արեւելք՝ Այրարատ նահանգի Ուրծ գավառում (այժմ՝ ՀՀ Արարատի մարզ), Ազատ գետի հովտում, լեռան լանջին է գտնվում Աղջոց վանքը: Այս ուշագրավ հուշարձանախմբի գլխավոր եկեղեցին Ս. Ստեփանոսն է: Ըստ ավանդության՝ Հայաստանում ապաստանած Հռիփսիմյաց կույսերը եւ նրանց համախոհ-ընկերակից Ստեփանոս քահանան, Տրդատ թագավորի հետապնդումներից խույս տալով, թաքնվում են Գառնիի խոխոմբ ձորերում, սակայն դեգերումների ճանապարհին՝ Աղջոց վանքի վայրում, մահանում է Ստեփանոս քահանան: Նրա

նշխարների վրա IV դարի սկզբին Գրիգոր Լուսավորիչը նոր դավանանքի նահատակի եւ նրա բախտակից կույսերի հիշատակին կառուցում է նախ վկայարան, ապա՝ վանք՝ անվանելով Աղջոց վանք: Վանքի ներկայիս կիսավեր համալիրը կառուցվել է XIII դարում եւ բաղկացած է երկու եկեղեցուց, գավթից, բնակելի ու տնտեսական շինություններից: Հայազետներից առաջինը, ով փորձել է հանգամանորեն ներկայացնել Աղջոց վանքը, խորագիտակ Դեռնոյ Ալիշանն է: Սակայն քննախույզ գիտնականին չի հաջողվել երաշխավորված եզրակացությունների հանգել: Աղջոց վանքը գիտական աշխարհին ներկայացնելու առաջին լուրջ փորձը կատարվել է XX դարասկզբին: Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերության արշավախումբը՝ Սիստեր, Տարագրոսը եւ Դարդյանը, 1907 թվականին ուսումնասիրել են արձանախումբը, լուսանկարել, չափազրել եւ ընդօրինակել արձանագրությունները: Մանրագին ուսումնասիրություններ է կատարել նաեւ Գարեգին Հովսեփյանը: Հայտնի վիճագրագետ, գիտնական, պատմական հուշարձանների խորագիտակ մասնագետ Սուրեն Սաղումյանը, ի մի բերելով վերոնշյալ բոլոր գիտնականների կատարած աշխատանքները, միաժամանակ ներկայացրել է տարիների կատարած իր ուսումնասիրությունը՝ վերծանած արձանագրությունները: 1986 թվականին գիտությունների ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդեսի» 2-րդ համարում՝ «Պատմական մի հուշարձանի կառուցման հարցի շուրջ» հոդվածում, նա վիճագիր արձանագրությունների՝ միակ հավաստի սկզբնաղբյուրի միջոցով հայտնաբերել է, որ Աղջոց վանքը կառուցվել է 1207 թվականին՝ Չաքարեի իշխանության, Իվանեի տիրապետության, Դավիթ կաթողիկոսի գահակալության ժամանակ, վարդապետ Աբելի առաջնորդությամբ եւ հասարակական միջոցներով: Եկեղեցու կառուցման արժեքը կազմել է



900 դահեկան կամ ավելի քան 4 կգ ոսկի: Այսպիսով իմանում ենք, որ ոչ միայն թագավորներն ու իշխանագուն կանայք են կառուցել եկեղեցիներ, այլեւ հայ ժողովուրդը նույնպես ավանդ է ունեցել հոգեւոր կառույցների գործում:

Ս. Ստեփանոս եկեղեցին ունի խաչաձև հատակագիծ, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով զմբեթավոր հորինվածք. գմբեթն ավերվել է երկրաշարժից: Այսօր ձորում կարելի է տեսնել եկեղեցու գմբեթի թափված մասեր, ինչպես նաեւ այլ հատվածներ, որոնք մեր հիշավոր ժողովրդի պատմության բեկորներն են: Եկեղեցու հյուսիսային պատին կից է երեմիա վանահոր օրոք իշխան Վասակ Խաղբակյանի 1270 թվականին կառուցած Ս. Պողոս-Պետրոս թաղածածկ եկեղեցին՝ խորանի երկու կողմերում ավանդատներով եւ հարավային պատին կից սենյակներով: Վանքում XV դարում գրվել են Ավետարաններ, ճաշոցը, Խազգիրքը: Աղջոց վանքում են պահվել Ս. Ստեփանոս քահանայի եւ Արիստակես Ա Պարթևի աշերք: XVII դարի սկզբին՝ շահ Աբբասի արշավանքի ժամանակ, Աղջոց վանքը կողոպտվել է, Արիստակես Ա Պարթևի աշքը հափշտակվել է ու տարվել Թավրիզ, որտեղ այն հետ է գնել բաղիշեցի մի հայ վաճառական եւ վերադարձրել Աղջոց վանքին: Այն այժմ գտնվում է Ս. Էջմիածնում:

1679 թվականի հունիսի 4-ի ավերիչ երկրաշարժից Խոսրովի արգելոցի շատ վանքերի հետ ավերվել է նաեւ Աղջոց վանքը, բայց այնուհետեւ նորոգվել է ու գործել մինչև XVIII դարի կեսը՝ մինչև լեզգիների վերջին ասպատակությունը, որից հետո լքվել է ու ամայացել:

Աղջոց վանքում կան արժեքավոր պատկերաքանդակներ: Ս. Ստեփանոս եկեղեցու արեւմտյան մուտքի ճակատակալին պատկերված է մի դրվագ Ահեղ դատաստանից, վերելում՝ փառքի պսակի մեջ, Զրիստոսն է,

ներքելում՝ երկու շարքով՝ ընտրյալները: Հարավային պատին քանդակված է Դանիելը՝ առյուծների գրում, ներքելում՝ պատուհանի երկու կողմերում, գույզ աղավանդներ են, խորանի ճակատի պատին՝ դեմ հանդիման, պատկերված է մարդկային երկու գլուխ՝ աքեմենյան խույր հիշեցնող գլխարկներով: Բազմազան են ու բարձրարվեստ եկեղեցու զարդաքանդակները՝ բուսական, երկրաչափական մոտիվներով: Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու արեւմտյան մուտքի երկու կողմերում Պետրոս եւ Պողոս առաքյալների՝ մարդու բնական մեծությամբ հարթաքանդակներն են: Մուտքից աջ երկարամագ եւ մուրուքով Պետրոսն է՝ աջ ձեռքը բարձրացրած, ձախում՝ բանալիներ, իսկ ձախ կողմում՝ Պողոսը՝ մորուքով եւ նույնպես երկարամագ, առանց ավանդական ճաղատի: Առաքյալների այս հարթաքանդակներն իրենց ոճով արմատապես տարբերվում են հայկական արվեստում մինչ այդ տիրապետող ոճական ուղղություններից, եւ նորություն է պատկերաքանդակներին ինքնուրույն նշանակություն տալը: Ցավոք, դարերի գեղեցկությունն ու փոշին ամփոփած այս հնամյա քանդակներն ավերակված են եւ սպասում են հոգատար ու ձեռներեց մարդկանց, որպեսզի վերագտնեն իրենց նախկին փառքն ու հմայքը: Ի դեպ, միայն 1997 թվականին Աղջոց վանք տանող ճանապարհը «Հայաստանի» եւ մի քանի անհատ ձեռներեցների շնորհիվ է նորոգվել: Ծայրահեղ անմխիթար եւ մտահոգիչ է ոչ միայն Հայաստանի Խոսրովի պետարգելոցում գտնվող Աղջոց վանքը, այլեւ պատմական այլ հուշարձաններ: Եթե այսօր մենք չկարողանանք վերականգնել բացառիկ Աղջոց վանքը, որը գնալով ավելի է քայքայվում, գուցե հետո այլեւս հնարավոր չլինի, իսկ այդ դեպքում մեզ չեն ների հետագա սերունդները:

Օվսաննա ՄԱՂԱՅԱՆ



Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 1

Գերագույն հոգեւոր խորհուրդը հանձնարարեց ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի գլխավորած հանձնաժողովին լրամշակել առաջարկները, կազմել միջոցառումների ծրագիրն ու ժամանակացույցը եւ ձեռնամուխ լինել աշխատանքների իրականացմանը:

Ժողովի ընթացքում լսվեց նաեւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների

վերատեսուչ Գեորգ եպս Սարոյանի զեկույցը՝ Գեորգյան հոգեւոր ճեմարանի, Վազգէնյան հոգեւոր դպրանոցի եւ Հառիճավանքի ընծայարանի վերաբերյալ: Գեորգ սրբազանը, անդրադառնալով Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների գործունեությանը, մասնավորաբար խոսեց հոգեւորականության պատրաստության ծրագրերի, ինչպես նաեւ Հայաստանի բուհերի ու արտերկրի համալսարանների եւ

հոգեւոր հաստատությունների հետ համագործակցության մասին:

Հանրակրթական ոլորտում Մայր Աթոռի գործունեության հիմնական ուղղություններին անդրադարձավ Զրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրէն Վարդան արքեպ Նավասարդյանը՝ ընդգծելով կենտրոնի արդյունավետ գործակցությունը ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ թեմերի հետ՝ մի շարք կրթական ծրագրերի շը-

ջանակներում եւ հատկապես Հայ եկեղեցու պատմություն առարկայի ուսուցիչների վերապատրաստության գործում: Ի թիվս տարբեր ծրագրերի՝ հայր սուրբը տեղեկացրեց, որ այս տարի ծրագրված է դպրոցներում անցկացնել հայ հոգեւոր եւ ազգային երգի հանրապետական փառատոն-մրցույթ:

Ժողովի երրորդ նիստին Գերագույն հոգեւոր խորհուրդն անդրադարձ կատարեց եկեղեցու կողմից սիրիահայությանը

ցուցաբերվող զորակցությանը: Տեղեկացվեց, որ այդ նպատակով Մայր Աթոռը 200 հազար ԱՄՆ դոլար արդեն փոխանցել է, իսկ վերջերս տրամադրել է եւս 100 հազար ԱՄՆ դոլար: Գերագույն հոգեւոր խորհուրդը հորդորեց թեմակալ առաջնորդներին շարունակել առավել շանքեր ներդնել՝ համայնքներից օգնություն եւ օժանդակություն հասցնելու կարիքի մեջ գտնվող Սիրիայի հայ համայնքին:

ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ ՎԵՔԱՎՆՐ Բ ԲՅՈՒՉՎԱՆՂԻ (1753-1754)


Սկիզբը՝ թիվ 3

Սարգիս Սարաֆյանը շատ շուտով իրեն զգացնել տվեց: Նա Յակոբ Նայան պատրիարքին խիստ նախատական ոճով նամակ գրեց, որի հետևանքը եղավ նրան քստորելու հրամանը: Երբ նա Կ. Պոլիս եկավ՝ իր սխալները մեղմելու նպատակով, ձերբակալվեց՝ չհասցնելով իրականացնել իր մտադրությունները: Ձերբակալվելուց առաջ նա հյուրընկալվել էր Սիմեոն Երեւանցի վարդապետին: Դա արդեն խոսում էր նրա հայադավանությանը վերադառնալու մասին, քանի որ Սիմեոնի պես մեկը փորձ չէր անի պաշտպանելու հռոմեացիականին:

Շրթայակապ Սարգիսի ձիով Ռոդոսթո տարան եւ հետո Դարդանելի նեղուցով տեղափոխեցին Բողազիսար, որպեսզի նավով ուղարկեն Կիպրոսի Մավսա ամրոց: Այստեղ նրա մոր թախանձանքով, բարեկամների նվերների միջոցով քստորված փոխեցին Քիոս կղզի՝ առանց բերդակալության: Այս ամենը տեղի ունեցավ 1756 թվին, երբ Սիմեոն Երեւանցին Կ. Պոլսում էր: Նա Քիոսում երկար չմնաց, քանի որ նրա բարեկամները կարողացան համոզել Նայանին, որ Սարաֆյանը ազատվի քստորից եւ նշանակվի Եվրոկիայի առաջնորդ: Սարաֆյանն քստորից նախ եկավ Կ. Պոլիս, որտեղ իր հայադավանության մասին հայտարարություններ արեց եւ այնքան վստահություն ներշնչեց, որ Նայանը համաձայնվեց նրան նշանակել Եվրոկիայի առաջնորդ: Հիվանդության պատճառով նա Կ. Պոլսից չհեռացավ եւ

առաջնորդությունը մեկ տարի վարեց փոխանորդի միջոցով: Հետո հրաժարվեց առաջնորդությունից եւ վերջնականապես հաստատվեց Կ. Պոլսում՝ քարոզչական աշխատանք վարելով տարբեր եկեղեցիներում: Նրան զիջեցին արած փոխառությունները եւ անգամ վճարեցին քստորի հետ կապված նրա կատարած ծախսերը: Անշուշտ, դա հնարավոր էր, եթե նա ապացուցել էր իր ջերմ հայադավանությունը:

Կ. Պոլսում ազգային կյանքի վրա մեծ ազդեցություն ունեին ամիրաները: Դրանցից էին Սեդեքստրոս Երեւանյանցը, Յակոբ Հովհաննիսյանը, որոնք սովորաբար հայտնի էին Սեդոս եւ Յադուբ ամիրաներ անուններով: Յադուբ արդեն մահ ունեցավ, իսկ Սեդոսը 1754 թ. փետրվար ամսին խաղաղությամբ կնքեց իր մահկանացուն: Այս ամիրաները մեծ ազդեցության էին հասել՝ շնորհիվ իրենց դրամական կարողության: Թուրք պաշտոնյաները՝ մեծ վեզիրից սկսած, ամեն մեկն ուներ իր ելեւտական գործարարը, ով վաճառական էր կամ սեղանապետ: Սրան տրված էր իրավունք՝ պետք եղած ժամանակ հայթայթելու հրամայված գումարը կամ փակել տալու գնումների ծախսերը: Ըստ որում՝ սրանք չէին մոռանում հոգալ նաեւ իրենց օգուտների մասին: Եվ որքան բարձր դիրքի էր հասնում թուրք պաշտոնյան, այնքան էլ աճում էին նրանց ազդեցությունը եւ իշխանությունը, նույն չափով էլ մեծանում էին նրա գործավարի իրավունքներն ընդհանրապես, իսկ առանձին շրջանակներում՝



մասնավորապես: Նրանք իրենց կամքն էին պարտադրում ժողովրդին: Երբ թուլանում էին թուրք պաշտոնյայի դիրքերը, ինչը սովորական բան էր Օսմանյան կայսրությունում, ազգային մեծամեծներն էլ նույն բախտին էին արժանանում՝ իրենց փողերով, անգամ գլխով քավելով սրանց անիրավությունները: Այդ շրջանի մեղավորներից էին Յադուբ Ակնեցին եւ Պետրոս Ալեքսանյանը, որոնք մեծ վեզիրի վաճառականներն էին, Մաթեոսը, որ սեղանավորների վերակացուն էր, Աբրահամ Զուլեյանը, Սիմեոն Աստուրյանը, Մարտիրոս Չոբանյանը, Գասպար Մուրադյանը, Բաղդասար Մուրադյանը, Պետրոս Պուռնուսուզյանը, Մուրադ Մուրադօղլին, Փիլիպոս Մուրադյանը: Իսկ Բաղդասար Սրմաբեշը եւ Միքայել Տյուզյանը, լինելով հռոմեացիականության հակամետներ, մերժում էին իրենց արածները՝ համարելով զրպարտություն:

Ահա այսպիսին էր իրավիճակը Կ. Պոլսում: Իսկ Երուսաղեմում 1752 թվից պատրիարքության աթոռին էր բարձրացել Թեոդորոս Խորենացին, որի օրոք բարձ-

րացվեցին տարբեր ազգերի սեփականության խնդիրները: Կաթոլիկները 1756 թվականին Ֆրանսիայի դեսպանատան միջոցով հրաման ձեռք բերեցին Սբ Աստվածածին եկեղեցին նորոգելու եւ սեփականացնելու համար: Հույներն իսկույն բողոքեցին՝ ներկայացնելով իրենց հին հրովարտականները: Ավելին. նրանք 1757 թվին նոր հրովարտակ ձեռք բերեցին՝ կաթոլիկներին այդտեղից քշելու համար: Հրովարտակը Կ. Պոլսից Երուսաղեմ հասավ 1758 թ., եւ կաթոլիկները Սբ Աստվածածին, Սբ Հարություն եւ Բեթղեեմի Սբ Տննդյան եկեղեցիներից հանվեցին: Հույները, սահման անցնելով, հասան նրան, որ հայերին էլ քշեցին հիշյալ սրբատեղիներից: Թեոդորոսն ստիպված էր պաշտպանություն ձեռնարկել: Հավաքելով կարելու փաստեր եւ տեղի դատավորից տեղեկագիր վերցնելով՝ նա դրանք ուղարկեց Կ. Պոլիս: Նայան պատրիարքն անցավ ակտիվ քայլերի եւ 1759 թվականին Մուստաֆա Գ սուլթանից նոր հրովարտակ ստացավ՝ հայերի սեփականության խնդրով, եւ հասավ նրան, որ հայերին վերադարձրին հափշտակած վանքերն ու տեղիները: Այդ գործում իրենց մեծ նպաստը բերեցին Ղազար Ակնեցի եւ Պետրոս Կամարակապցի ամիրաները, Կ. Պոլսում Թեոդորոսի փոխանորդ Գրիգոր վրդ. Բասմաշյանը: Սակայն վեճերը դրանով չավարտվեցին: Դամասկոսի կուսակալները, կաշառք վերցնելով թե՛ լատիններից եւ թե՛ հույներից, խնդրին լուծում չտվեցին: Նրանք շատ կարեւորեցին Երուսաղեմի մահմեդականների անհիմն պահանջները եւ նեղեցին քրիստոնյաներին: Հայերն էլ, բնականաբար, նեղություններ կրեցին, ստիպված եղան ծախսեր կատարել, պարտքի տակ ընկել, բայց փաշաներին գոհացնել չկարողացան:

Շարունակությունը՝ էջ 4



Սկիզբը՝ 2013 թ. թիվ 2-3

Ինքնակառավարման այս սկզբունքը մեր Եկեղեցու գլխավորությամբ իրագործուել է նաեւ գաղթավայրերում (Լեհաստան, Հունգարիա, Ուկրաինա, Յնդկաստան, Ռուսաստան, Տրանսիլվանիա, Պարսկաստան եւ այլուր): Հայ համայնքների իրական ժողովածուները՝ գաղթավայրերում գործարդելով եւ տեղի ժողովուրդների լեզուով դրանք թարգմանելով, որոշակի ազդեցություն են թողել հիւրընկալ երկրների կառավարման ու դատական համակարգերի վրայ: Օրինակ՝ ԺՂ դարից Լեհաստանում գործածող լեհահայոց Դատաստանագիրքը, որտեղ յստակօրէն նշուած է կառավարող եւ դատական մարմինների՝ ամբողջ համայնքի կողմից ընտրուած լինելու փաստը, 1518

թ. թարգմանուել է լատիներէն (1528 թ.՝ նաեւ լեհերէն), 1519 թ. հաստատուել Լեհաստանի Սեյմում: Կամ՝ ճորտատիրական ամենադասական երկրներից մեկում՝ Ռուսաստանում, հայերն իրենց օրէնսդիր եւ դատական իշխանութիւնը ձեւաորում էին ազատ ընտրութիւններով ստեղծուած մարմիններով (քաղաքներում՝ քաղաքային վարչութիւններին եւ այդ վարչութիւններին հաշուետու քաղաքագլխի, մանր բնակավայրերում եւ գիւղերում՝ ծխական, թաղական ու թեմական ընտրովի խորհուրդների միջոցով): Ժողովրդավարութեան մի մակարդակ, որը Ռուսաստանի համար հասանելի դարձաւ միայն 20-րդ դ. վերջին տարիներին: Հայաստանեայց Եկեղեցու կազմակերպական կառոյցի ու օրէնսդ-

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին աստուածաշնչեան ժողովրդավարութեան եւ Քրիստոսի Եկեղեցւոյ առաքելական շրջանի ուղղափառ դաւանութեան 1700-ամեայ պատուար

րութեան հիմքի վրայ է կառուցուած նաեւ Յակոբ Շահամիրեանի «Որոգայթ փառաց» կոթողային երկը, որն աշխարհի առաջին սահմանադրութիւնն է (Ռ. Համբարձումեան, Որոգայթ փառաց, ակունքները, այժմեականութիւնը եւ առանձնայատկութիւնները, Եր., 1999 թ.): Արեւմտահայերը եւս, 1840-ական թուականներից սկսած, դարձեալ բռնապետական-միապետական մի երկրում իրենց օրէնսդիր, գործադիր ու դատական իշխանութիւնը սկսում են իրականացնել ժամանակի ամենաժողովրդավար սահմանադրութիւններին չը զիջող սկզբունքներով, իսկ 1857 թ. Նահապետ Ռուսինեանը, Աղաթոն եղբայրները, Սերովբէ Վիչենեանը, Նիկողոս Պալեանը, Գրիգոր Օտեանը եւ Կարապետ Ութիճեանը կազմում են Հայաստանեայց Եկեղեցու «Ազգային սահմանադրութիւնը»՝ ամբողջ Արեւելքի, նաեւ Ռուսական կայսրութեան սահմաններում իրագործուած առաջին սահմանադրութիւնը, որը երկար քննարկումներից յետոյ Հայոց ազգային ժողովը հաստատում է 1860 թ., սուլթանը՝ 1863 թ.: Հայաստանեայց Եկեղեցու այդ սահմանադրութեամբ արեւմտահայութիւնը ղեկավարում էր իր իսկ ընտրած եւ Կ. Պոլսում նստող 140 հոգանոց «Ազգային ընդհանուր ժողովով»՝ խորհրդարանով: Ազգային ընդհանուր ժողովի նախա-


գահն էր Թուրքիոյ հայոց պատրիարքը, որն օժտուած էր այսօրուայ նախագահի (պրեզիդենտ) լիազօրութիւններով, ուներ իր գրասենեակը (դիւանատուն), աշխատակազմը, իսկ Ազգային ընդհանուր ժողովի ընտրած գործադիր մարմինը (Կեդրոնական վարչութիւն), ըստ Եութեան, կառավարութիւն էր՝ իրեն հաշուետու ուսումնական, տնտեսական, դատաստանական ու ելեւմտից «Յանձնաժողովներով», ինչպէս նաեւ գաւառական եւ այլ վարչութիւններով ու հոգաբարձութիւններով: Բոլոր պաշտօնեաները, թաղական խորհրդի անդամներից սկսած, պատրիարքով վերջացրած, ընտրովի էին եւ խիստ հաշուետու՝ երեսփոխանների (պատգամաւորների) առաջ, դատարանն անկախ էր: Ի դէպ՝ սուլթանի կողմից հայոց ժողովրդավարութեան վրայ գործադրվող ճնշումը թուլացնելու համար հայերն ամեն ջանք թափեցին, որպէսզի թուրքերը եւս ունենան սահմանադրութիւն: Գրիգոր Օտեանը Միդիաթ փաշայի հետ կազմեց նաեւ թուրքական սահմանադրութիւնը, որը սուլթանը 1876 թ. հաստատեց, իսկ 1878-ին չեղեալ յայտարարեց: Այս եւ բազմաթիւ այլ փաստեր ցոյց են տալիս, որ մեր իրական կուշարձանները ազդեցութիւն են թողել մեզ հետ շփում ունեցած երկրների իրական կառավարչութիւնի վրայ:

Բ. Ժամանակն է շեշտելու եւ հիմնաւորելու պատմական այն իրողութիւնը, որ Հայաստանեայց Եկեղեցին Տիեզերական Եկեղեցու՝ առաքելական շրջանի ճշմարիտ դաւանութիւնը պահպանած ու մեր ժամանակները հասցրած միակ կառոյցն է:

Աստուածաբանութեանը, մասնաւորաբար Հայաստանեայց Եկեղեցու դաւանաբանութեան առանձնայատկութիւններին բաւարար ծանօթութիւն չունեցող որոշ գիտնականներ այսօր սկսել են յօդուածներ գրել, գիտաժողովներին գեկուցումներ կարդալ մեր Եկեղեցու դաւանութեան վերաբերեալ՝ թե՛ մեզ եւ թե՛ յատկապէս օտարներից գցելով թիրիմացութեան մեջ: Առանձնապէս անընդունելի են երկու շատ բարդ եւ նուրբ խնդրի մասին նրանց տարածած դրսեկ հաստատումները, որոնք դառնում են ապատեղեկատուութիւն: Մեկը՝ որ իբր մեր Եկեղեցին «արեւելեան» է, միւսը՝ որ իբր միաբնակ է (միաբնակը (մոնոֆիզիտ) այն Եկեղեցին է, որը Յիսուս Քրիստոսին միայն Աստուած է ճանաչում, երկաբնակները Յիսուսի մէջ երկու բնութիւն են ընդունում՝ կատարեալ մարդ եւ կատարեալ Աստուած): Հայոց Եկեղեցին, համեմատաբար ասելի մերձ լինելով միաբնակութեանը, այսուամենայնիւ ո՛չ միաբնակ է, ո՛չ երկաբնակ՝ մի շարք պատճառներով:

Շարունակությունը՝ էջ 5

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (շափածո, արձակ, թատերգություն)



Ա. ԶԱՓԱԾՈ

Սկիզբը՝ 2012-ի թիվ 23-24, 2013-ի թիվ 1-3

Մարդու կերպարը Գ. Էմինը տեսնում է ժամանակակից կյանքի բարդ ու հակասական հանգույցների մեջ: Դրա վկայությունն է «XX դար» գրքի համանուն շարքը: Դարձյալ մի կողմից՝ քաղաքակրթության նվաճումներ, մյուս կողմից՝ քաղաքակրթության մարդու հմտությամբ վերադարձող նախնադարի տագնապ: Այս հակադրության մեջ է, ահա, բանաստեղծը տեսնում ու իմաստավորում մարդու ու ժամանակի կապը: Ցուցադրվող պատկերները հաջորդում են մեկը մյուսին: Երկնաքեր ստեղծած մարդն իր ստեղծածից բարանձավ է փախչում, նեոնե լամպերի լույսը հիշեցնում է Ներոնի հրդեհի լույսը, հաշվիչ մեքենայի կողքին կանգնում է մեքենայի վերածված մարդը: Ժամանակի ամբողջական ուրվանկարն առանձին բանաստեղծություններում տրոհվում է որոշակի պատկերների եւ ի հայտ բերում քաղաքակրթության դարի անեծքն ու օրհնանքը («Զսաներորդ դար», «Ստրիպտիզ», «Գիշերային կարճերում», «Վաղվա թերթը», «Անքնություն», «Ավե, Մարիա»): Մարդու, մարդկության ու ժամանակի գլխից վերել

բարձրանում է ատոմային սունկի աղետալի ուրվանկանը, որ անխուսափելի վախճան է բերում առաջին եւ վերջին մարդուն եւ նրանց միջեւ ընկած հիշողությանը, որ քաղաքակրթության պատմությունն է: Ահա այս դեպքում է, որ մարդկության ու նաեւ մարդկայնության անուկից խոսող բանաստեղծի պատասխանատվությունը ժամանակի հանդեպ դառնում է բարոյականության միակ չափանիշ: Ահա այդ բարոյականությունն է, որ նրան մղում է գրելու:

*Ցանկացած օրն
Առանց պատճառ էլ ինձ կախեն,
Չեմ վիճի ու արդարանա.*

*Երբ
Այս քանի՞ դար է արդեն
Թեեւ լավ գիրք ինչքան ասես,
Բայց... դեռ մարդ կա հացի կարոտ,
Դեռ կոնվեր մա՛րդ է հնձում,
Խելքը ուժից շնորհ հայցում.
Դեռ հանգրձած շահը պայծառ
Փառքը տալիս են մարիսերին...
Իսկ ես... գրո՞ւմ եմ արխիվին...*

Մարդու եւ ժամանակի հանդեպ ունեցած նույն այս պատասխանատվությունն է ծնունդ տվել նաեւ **Յ. Սահյանի** «Ինչ արած, մարդ եմ», «Իմ ապրած կյանքը», **Ն. Չարյանի** «Այս ատոմային ռումբի, խղճի եւ խաղաղության», «Մեր մոլորակը», «Այս նորին մեծության ստի», «Անձրեւից հետո», «Ճնեւյան երազ», **Յ. Շիրազի** «21-րդ դարը (վա՛յ տեսնողներին)», «Յամաշխարհային վիշտ», «Նավաբեկություն», «Աստծո ձայնը», «Էլեգիա համամարդկային» բանաստեղծություններին: Բանաստեղծները մարդու ճակատագրի ետեւում տեսնում են ամբողջ մարդկության բախտը, «Իմ հայրենիք» սրբազան արտահայտության կողքին հաճախակի հնչեցնում «Մեր մոլորակ» աստիճանաբար թանկացող խոսքը, հանուն մարդու եւ մարդկայնության ավելի ուժեղ հնչեցնում խղճի ու հավատի զանգերը:

Մարդը հայտնաբերվեց եւ ներբողյաններով փառաբանվեց նաեւ ավելի որոշակի վիճակների ու հարաբերությունների մեջ: Դա աշխատանքն է, իսկ խոսքի հերոսը՝ հողից բարիք քամող մարդը: Այս կողմնորոշման վկայությունն է **Վ. Դավթյանի** «Գիտու երգը» (1966) ժողովածուն, **Մ. Մարգարյանի** «Մրգաշատի կարոտ», «Պատկերներ բնաշխարհից», **Յ. Յուզիանի** «Յուզիանի ալբոմ» շարքերը, **Յ. Սահյանի** «Պապը», «Եզր», «Օրը մթնեց» բանաստեղծությունները: Նպատակը մարդու արդար գոյության հաստատումն է իր օրերի մեջ, նրա աշխարհաշեն ուժի փառաբանումը: Սահյանի Պապը, Դավթյանի, Մարգարյանի, Յուզիանի Ալբոմը կեցության չափանիշ են բոլոր ժամանակների համար, որ բնաշխարհիկ մարդու կերպարով ներկայացնում են մարդու, հողի, բնության ու աշխատանքի դաշինքը:

Մարդու եւ բնության այս կապը շարունակվում ու խորանում է **բնության քնարերգության** մեջ: Այս տեսակետից առանձնանում է **Յ. Սահյանի**, **Գ. Սարյանի**, **Յ. Շիրազի**, **Վ. Դավթյանի**, **Յ. Յուզիանի**, **Ա. Ալիբեյլի** պոեզիան: Մարդու հոգեւոր կյանքը բնության հազարամյա օրենքների ու օրինաչափությունների մեջ բացահայտելու մի ուրույն աշխարհ են բերում **Յ. Սահյանի** «Մայրամուտից առաջ» (1964), «Զարափների երգը» (1968), «Իրիկնահաց» (1977), «Կանաչ-կարմիր աշուն» (1980), «Դաղձի ծաղիկ» (1986) գրքերը:

Յ. Սահյանը վերջին տասնամյակների հայ պոեզիայում վերահաստատեց մարդու

գոյության նախնական ու հավերժական չափանիշը: Դրանով հանդերձ՝ նա բնավ չմեկուսացավ իր ժամանակից, այլ համատեղեց քաղաքակրթության առաջընթաց շարժումը բնության օրենքների: Դիմելով գիտատեխնիկական առաջընթացով սուրաբուր ժամանակին, իր ու ժամանակի մեջ դնելով այսպիսի հարաբերություն. «Քո ոտքը հեռու մարտերի վրա, Իմ ոտքը ծած մարգերի վրա»՝ Սահյանն ասում է. «Արդարեւ, միայն մի բան է մնում. Իրար մեջ ապրենք ու հարստանանք - ես՝ քո հրթիռի հրատապությամբ, Դու՝ իմ ուշացած խաչկապություն» («Ախ, իմ ժամանակ»): Կենդանի ժամանակի զգացողությունը **Յ. Սահյանի** համար ապրելու եւ ստեղծագործելու նախապայման է: Եթե հուշերը մի կողմից նրան տանում են ետ՝ դեպի մանկություն, ապուպայերի հիշողությամբ՝ դեպի կեցության նախնական ակունքները, ապա մյուս կողմից՝ շարժվող ժամանակը դառնում է իրական կյանքի առաջմղիչ ուժ («Առ քո թեւերին, տար ինձ, ժամանակ»): Այսպիսով, բանաստեղծի համար անցյալն ու ներկան դառնում են ժամանակային մեկ ուղղություն, քանի որ ժամանակի ընթացքին բանաստեղծը նայում է բնության նախաստեղծ ժամանակների խորքից՝ մնալով հանդերձ այսօրվա մարդ ու քաղաքացի:

Սահյանի բնության քնարերգությունը շատ տեղային է: Նրա պատկերած բնությունը անգամ չի ընդգրկում ամբողջ Հայաստանը, այլ միայն իր ծննդավայրը՝ Չանգեզուրը: Տեղային-տեղանքային ճշգրտությունը նրան բնավ չի կաշկանդում, ընդհակառակը՝ մանրամասների ամբողջությամբ ստեղծում է մի աշխարհ, որն իր ներքին օրենքներով օգնում է լուծելու գեղագիտական շատ ընդհանուր ու ծանրակշիռ հարցեր:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՎԼԵՔԱՆԴՐ Բ ԲՅՈՒՉԱՆԴՅԻ (1753-1754)

Սկիզբը՝ էջ 3


Այդ մասին Թեոդորոս պատրիարքը 1760 թ. մայիսի 13-ի գրությամբ մանրամասն տեղեկացրել է Կ. Պոլսի պատրիարքությանը՝ օգնություն եւ պաշտպանություն խնդրելով: Ամենուրեք Օսմանյան կայսրությանը բնորոշ անիրավություն, ապօրինություն եւ կաշառք վերցնելու եղկելի իրականությունն էր տիրում:

Միջայել Աջապահյանը Կ. Պոլսում էր, երբ իր եղբայրը մահացավ: Լինելով արդեն օձյալ կաթողիկոս՝ նա շտապեց կաթողիկոսական գահին նստելու: Նա արդեն երկու անգամ՝ 1749-ին եւ 1751-ին եղել էր Կ. Պոլսում՝ ջանալով իր իրավասության սահմաններն ընդարձակել Էջմիածնի հաշվին: Այդ թվականները համապատասխանում են Պրոխորոնի հափշտակության եւ Ղափանցու պատրիարքության շրջանին: Դա ցույց է տալիս, որ նա փորձել է օգտվել նման առիթներից, սակայն միաժամանակ զգուշացել Նայյանի օրոք նման ծրագրեր մշակելուց: Միջայելին հաջողվեց շուրջ 20 տարի արդյունավետ գործունեություն վարել: Նա, ինչպես իր ավագ եղբորից կաթողիկոսակից էր օձվել, այնպես էլ ինքն իր կրտսեր եղբորը՝ Գաբրիելին օձեց աթոռակից՝ կաթողիկոսական գահն Աջապահյան ընտանիքից բաց չթողնելու համար:

Նա մահացավ 1758 թվին, որից հետո հաջորդությունն անցավ եղբորը: Փաստորեն՝ երեք եղբայր եղան Կիլիկիայի կաթողիկոսության գահակալներ:

Այս շրջանում Գոգանօղլու դերը Կիլիկիայում սկսել էր մեծանալ՝ հասնելով բռնապետության: Եվ կաթողիկոսներն էլ ստիպված էին մերթ ինքնապաշտպանությանը դիմել, մերթ էլ հանդիպել նրա կողմից հարստահարության: Կիլիկիայում կային նաեւ բազմաթիվ կես-ինքնագլուխ ցեղապետեր, որոնք անվանապես համարվում էին Կեսարիայի փաշայի հպատակները: Սրանք Սուլում բռնում են Լիվանօղլուն, ով իրեն համարում էր Հայոց Լեւոն թագավորի ազգակիցը: Սրա դեմ դուրս է ելնում Յուսուֆ Գոգանօղլին, մի անտոհմ մարդ, ով ամուսնացել էր Դեւելու գավառի ցեղապետի այրու հետ, նրա միջոցով ուժեղացել է Լիվանօղլուն ընդ էր Սսից: Նա Սսից մինչեւ Տավրոս լեռների մի մասն իր անունով կոչել էր Գոգանօղլի:

Վիճակը մյուս աթոռներում նույնն էր: Աղթամարում Նիկողայոս Սպարկերտցուց հետո՝ 1758 թ., գահ է բարձրանում Գրիգոր անունով կաթողիկոսը, որի մասին այլեւս ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Գանձակի կաթողիկոսությունում շարունակում էր հովվապետել Ներսես Գանձակեցին, որը մահացավ 1763-ին: Պարսկաստանում Չաքարիան էր, որը երկար տարիներ առաջնորդելուց կամ, ըստ ոմանց, տեղապահելուց հետո փոխարինվում էր Գեւորգ Ջուղայեցիով: Վերջինս պարսկերեն էր թարգմանել Սուրբ Գրքերը: Եվ չիմանալով պարսից իշխանությունների հալածանքին եւ ա-



նիշխանական մթնոլորտին՝ Գեւորգը հավաքում է Ս. Ամենափրկիչ վանքի թանկարժեք սպասքը եւ հեռանում Պարսկաստանի թեմի Բասրա քաղաք եւ այստեղից վարում առաջնորդությունը: Պետրոս եւ Բարադամ վարդապետները, որ ապրում էին վանքում, 1760 թ. Ջուղայեցուն խնդրում են, որ վերջինս հետ վերադառնա, որպեսզի այնտեղ մնացածները չհուսահատվեն, եւ առաջնորդությունն անտեր չմնա, սակայն Գեւորգը հրաժարվեց եւ Բասրայում մնաց մինչեւ 1763 թ., այսինքն՝ մինչեւ Զեքիմ խանի ուժեղանալը, երբ երկիրը գտավ իր համեմատական խաղաղությունը:

Այս շրջանում մի խումբ հայեր նահատակվեցին: Նրանցից մեկը Ալաշկերտի Թոփրաքքալե ավանում ծնված, գեղեցկատես ու ձայնային հրաշալի տվյալներով

հանում Վաղարշակետցի կույսն էր: Ստույգ պատճառները, թերեւս, անհայտ են: Ասում են, որ մայրը մահմեդականություն է ընդունել եւ կամեւնում էր, որ աղջիկն էլ հետեւեր իրեն: Սակայն աղջիկը, մերժելով մորը, նետվում է Արածանի գետը: Հետապնդողները հասցնում են կիսախեղդ հանումին դուրս հանել ջրից: Մայրն էլ հետո հանձնում է շեյխերին, սակայն երբ նրանց չի հաջողվում աղջկան հավատափոխ անել, դատապարտում են մահվան: Նախ խոցում են նրա կողը, ապա հոշոտում մարմինն ու նետում գազաններին՝ որպես կեր: Բայց քրիստոնյաները նրա բզկտված մարմինը հողին են հանձնում գերեզմանատանը: Նա նահատակվեց 1755 թ. մայիսի 3-ին: Մինչեւ 20-րդ դ. սկզբներն այստեղ պահպանվում էր մի քարակույտ, որը ցույց էր տալիս հանումի գերեզմանը:

Մի քանամյա հայ երիտասարդ էլ նահատակվեց Դրիմի Ղարասուբազար քաղաքում, որի անունը Փռանկուլ էր եւ հայաստանյան (հավանաբար Արարատի շրջան) Շրջվանց գյուղի Ազիզ բեկի որդին էր: Թաղվեց քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու գավթում:

Նահատակվել են նաեւ Աստվածատուր Մալղարացին, Կոմիտաս Պիլեճիկցին եւ այլք:

Ս. Օրմանյանի օրերում Կ. Պոլսում դեռեւս պահպանվել էր Հարություն նահատակի գերեզմանը՝ ընդարձակ տապանագրով: Պահպանվել էր նաեւ մեկ այլ նահատակի տապանաքար, սակայն տապանագրի մեջ նահատակի անունը հիշատակված չէր: Չի բացառվում, որ նա վերոհիշյալ Հարությունի ընկերակիցն է եղել:

Բարկեն ԳՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
73 ԳՍԱ թղթակից անդամ, պրոֆեսոր

Հայոց ցեղասպանության ազդեցությունն արեւմտահայ մշակույթի վրա



Սկիզբը՝ թիվ 3

Հայկական մշակույթն իրական վերածննդի նշաններ սկսեց ցուցաբերել միայն 1930-ական թվականներին՝ Փարիզում: Մի խումբ տաղանդավոր հայ երիտասարդներ սկսեցին դժգոհություն արտահայտել իրենց մեծերի դեմ՝ մեղադրելով նրանց անցյալի անհաջողությունների և ստորացումների համար: Նրանք սկսեցին հրատարակել «Մենք» անվանումով մի ամսագիր, որում իրենց տեսակետներն էին արտահայտում ազգային հիմնախնդիրների վերաբերյալ: Այդ շնորհիվ երիտասարդ մտավորականները խստորեն քննադատում էին այն տաբուները, որոնք սուրբ էին համարվում հայ ժողովրդի կողմից: Ամսագրի հիմնադիրները նաեւ քննադատում էին արեւմտահայերի մշակութային արժեքները: Նորահայտ հայ մտավորականների և եղեռնից փրկված հին սերնդի մտավորականների

միջեւ ծայր առան բուն բանավեճեր, որոնք տեւեցին մոտ մեկ տասնամյակ: Այդ բանավեճերի արդյունքում ծնվեց Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը: Սփյուռքահայ գրողի այս երկն խնկույն եւեթ վիթխարի հետաքրքրություն առաջացրեց: Վեպի գլխավոր թեման հուսալքությունն է, որն առաջացել էր ազգի փրկության հեռանկարների բացակայությունից: Շահնուրի երկն ակնհայտորեն հանդիսանում է ցեղասպանության հետեւանքով առաջացած նեգատիվիզմի և վատատեսության արդյունք: Այն արտացոլում է բարոյագրված զանգվածների խառնվածքն ու հակումները: Հարկ ենք համարում հավելել, որ գրքի հրատարակումից նույնիսկ մի քանի տասնամյակ անց դրա հիմնական նախադրյալները մնացին չբացահայտված: Ավելորդ չէք համարում նշել, որ վերը նշված խմբին պատկանող սփյուռքահայ գրողները, որպես կանոն, խուսափում էին Շահան Շահնուրի լուսաբանած սուր թեմաներն արծարծելուց և բավարարվում էին իրենց անձնական ողբերգությունները ներկայացնելով, թեւ նրանց գրվածքներում երեւան են գալիս տագնապի և անպաշտպանվածության զգացումներ, որոնք անկասկած առաջացել էին հայոց ցեղասպանության հետեւանքով: Սփյուռք-

քահայ հեղինակների երկերում բացահայտվում է նաեւ նրանց երկակի վերաբերմունքը ֆրանսիական մշակույթի հանդեպ: Մի կողմից հայ արվեստագետները մերժում էին օտար մշակույթը, բայց միեւնույն ժամանակ հիացած էին դրանով (այդ գրողներից առավել հայտնի են Շահան Շահնուրը, Վազգեն Շուշանյանը, Նիկողոս Սարաֆյանը, Շավարշ Նարտունի, Նշան Բեշիկթաշյանը, Հրաչ Սարգիսյանը և Չարեհ Որբունիս): Նշված գրողներից հատուկ ուշադրության է արժանի տաղանդաշատ բանաստեղծ Նիկողոս Սարաֆյանը, որն իր պոեզիայի միջոցով լուսաբանում է ներքին ուժերի և ազգի ճակատագրի զգացողության խառնաշփոթությունը: Հաջորդող տասնամյակների ընթացքում հայ ժողովրդի մշակութային ճգողականության կենտրոնը տեղաշարժվում է դեպի Մերձավոր Արեւելքի համայնքները, որոնք այդ ժամանակ արդեն լավ կազմակերպված էին: Հոգեկան տառապանքն ու սիրո ծարավը չբացան, բայց բնավ ո՛չ անպաշտպանվածության և ինքնախնդհանրության զգացումները և ո՛չ էլ հալածված ու գոհ դարձած ազգի բարոյությունը: Ահա թե ինչու այդ շրջանի գրականությունը մնաց էթնոկենտրոն ու չափազանց հուզական: Սփյուռքահայ գրողները լուսաբանում են

այն թեմաները, որոնք արծարծվել էին դեռևս մինչև եղեռնը: Պահպանվել էր նաեւ հին գրական ոճը: Հայ գրողները հրաժարվում էին ընդունել սուր արժեքներ և խուսափում էին ոճական նորարարություններից: Մերձավոր Արեւելքի գրողների հավատարմությունն ազգայնականման հրամայականներին տարբեր եղանակներով դրսևորվում է նաեւ հայկական մյուս համայնքներում, գլխավորապես այն պատճառով, որ պատերազմի ավարտից հետո այդ համայնքներն ստանձնեցին ազգային առաջնորդների դերը: Բացառությամբ մի քանի ժամանակակից երիտասարդ գրողների՝ գրեթե բոլոր բանաստեղծներն ու վիպասանները գրել են ազգի արժանիքների ու առաքինությունների մասին, գովերգել են հայկական մշակույթի բարոյական ու զգացմունքային ասպեկտները, փառաբանել են Հայ Եկեղեցին՝ իբրև ազգափրկության ամրոց, գովերգել են կյանքն ու հայրենիքի իդեալը, շատ զգացմունքային ձևով արտահայտել են իրենց կարոտը Հայաստանի հանդեպ և այս կամ այն կերպ դրսևորել իրենց հակվածությունն իշխող վերնախավի ավանդույթներին ու գաղափարախոսությանը:

Շարունակությունը՝ էջ 6

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին աստուածաշնչեան ժողովրդավարութեան և Քրիստոսի Եկեղեցւոյ առաքելական շրջանի ուղղափառ դաւանութեան 1700-ամեայ պատուար

Սկիզբը՝ էջ 3

Նախ, որ ընդունում է քրիստոնէական Եկեղեցու միայն առաջին երեք (հսկական) տիեզերածողվների (Նիկիոյ՝ 325 թ., Կ. Պոլսոյ՝ 381 թ., և Եփեսոսի՝ 431 թ.) սահմանած դաւանութիւնը, երբ Եկեղեցին ո՛չ արեւելեան, ո՛չ արեւմտեան էր, այլ մի էր, և ո՛չ միաբնակութիւն կար, ո՛չ՝ երկաբնակութիւն: Այդ շրջանում նշուած տարբերութիւնները կային, բայց եւկան չէին: Ոմանք Քրիստոսի մարդկային բնութիւնը գրեթէ ջնջում էին (Եւտիքեի միաբնակութեան նախահիմքը), իսկ Անտիոքի դպրոցը պնդում էր, թէ Քրիստոսի մարդկային և աստուածային էութիւն-բնութիւնների միջեւ որոշ անջատում կայ (Փղաբխանոսի երկաբնակութեան նախահիմքը): Սակայն Աղեքսանդրեան դպրոցի առաջարկած և առաջին երեք տիեզերածողվների հաստատած միջին դիրքը (Յիսուս Քրիստոսը Աստուած է, որի մէջ անշփոթելիորեն միացած են երկու բնութիւնները՝ Աստուած և մարդ) հաւասարակշռում էր այդ երկու հերձուածները: Բայց երբ Հռոմեական կայսրութիւնը երկատուեց Արեւմտեանի և Արեւելեանի (395 թ.), ամբողջական-միասնական քրիստոնէական Եկեղեցին քաղաքական նպատակներով սկսեց մասնատուել: Առաջին պառակտումը եղաւ Զաղկեդոնի ժողովում (451 թ.): Այդտեղ Հռոմի և Կ. Պոլսոյ Աթոռները, օգտագործելով հռոմեական կայսր Մարկիանոսի իշխանութիւնը, ընդունել



տուեցին դաւանական սուր սկզբունքներ և փաստօրէն ջնջեցին առաջին երեք տիեզերածողվների դաւանական բանաձեւումներից մեկը, որի խտացումը Կիրեղ Աղեքսանդրիացու յայտնի բանաձեւերն էին՝ «Մի բնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ» (մէկ է մարմնացած բանի [Քրիստոս Աստուծոյ] բնութիւնը) և «յերկուց բնութեանց և մի», որը ս. Յովհանն Օձնեցին մեկնաբանում է այսպէս. «Երկուս ըստ բնութեան, և մի՝ ըստ միաւորութեան» բնութեամբ երկուս, բայց միաւորութեամբ՝ մէկ (Արշակ Տեր-Միքէլեան, Հայաստանեայց Եկեղեցին և Բիզանդիան ժողովոց պարագայը, Սոսկոյա, 1892 թ., էջ 89-ի տողատակի ծանօթագրութիւնը): Անտիոքի դպրոցի վերոյիշեալ այն դրոյթը, թէ Քրիստոսի մարդկային և աստուածային բնութիւնների միջեւ ան-

ջատում կայ, Զաղկեդոնն աւելի զարգացրեց: Այսպէս մէկը միւսին իր ազդեցութեան տակ գցել ձգտող Աթոռները միասնական Եկեղեցու վարդապետութիւնը բեռնեցին սուր բանաձեւումներով, երկուստեք սկսեցին արագօրէն հեռանալ առաքելական շրջանի և յետագայ երեք դարերի ընթացքում Եկեղեցու մեծ հայրերի բիրեղացած դաւանութիւնից: Աւելի ճիշտ՝ Զաղկեդոնից յետոյ առաջացած տարբերութիւնները հետոյեւտէ սկսեցին գերազանցել ընդհանրութիւններին: Յետագայ դարերում տարբերութիւնները քաղաքական նկատառումներով աւելի խորացան ու այլեւս անհնար դարձաւ Քրիստոսի Եկեղեցու միութիւնը: Չ դարասկզբից իրարից հեռացան նաեւ Հռոմի և Կ. Պոլսոյ Աթոռները, որոնք 451 թ. Զաղկեդոնում միացել էին՝ Ա-

ղեքսանդրիայի Աթոռին ծնկի բերելու համար: Ընդ որում Արեւելեան Հռոմեական կայսրութեան ազդեցութեան տակ ընկած յունադաւան Եկեղեցին, հետոյեւտէ սրբագրելով Հռոմի առաջարկած դոգմաները, սկսեց ետ գալ դէպի Հայոց Եկեղեցու պահպանած դաւանութիւնը: Սա այն դէպքում, երբ մի քանի դար շարունակ հայերիս ստիպում էր միանալ Զաղկեդոնում ընդունուած բանաձեւերին: Բիզանդիան վրացիներին և դարասկզբին Կիրիոն եպիսկոպոսի ձեռամբ անջատեց Հայոց Եկեղեցուց, միացրեց իրեն, որով Կրաց Եկեղեցին ամբողջովին կորցրեց այն ազատութիւնն ու ինքնավարութիւնը, որ ուներ, երբ միացած էր Հայոց Եկեղեցուն: Ը դարից սաստկացած Հռոմ - Կ. Պոլիս Աթոռների հակամարտութիւնն այնքան խորացաւ, որ 1054 թ. այդ Աթոռները վերջնականապէս բաժանուեցին: Հռոմեական (Լատին) Եկեղեցին սկսեց պաշտօնապէս կոչուել Կաթոլիկ (Ընդհանրական), Արեւելեան Հռոմեական կայսրութեան ազդեցութեան տակ ընկած Եկեղեցին՝ Կ. Պոլիս կեդրոնով, շարունակեց անուանուել Յոյն Ուղղափառ (Օրթոդոքս) Եկեղեցի: Հռոմի Աթոռը կոչուում էր Արեւմտեան, Կ. Պոլիսը՝ Արեւելեան: Միաբնակ յունադաւանները կոչվելի աղանդ համարեցին երկաբնակ հռոմեականներին, (լատինադաւաններ, կաթոլիկներ), հռոմեադաւանները՝ յունադաւաններին:

Հայաստանեայց Եկեղեցին չի մասնակցել այս բաժանումներին և Արեւելք-Արեւմուտք հակամարտութեան ամբողջ ընթացքում միշտ պահել է ինքնապաշտպանական չէզոք դիրք, մահու և կենաց պայքարով պահպանել իր գրիգորյան արժեքները, քանզի յոյները ձգտում էին հայերին քաշել իրենց կողմը, լատինները՝ իրենց: Այդ ընթացքում հայադաւանութիւնը Հայոց Եկեղեցու մեծ հայրերի ստեղծած դաւանաբանական, ծիսագիտական ու աստուածաբանական ահռելի գրականութեամբ, հայոց ինքնատիպ Պատարագամատոյցով, ժամերգութեամբ, հոգեւոր երաժշտութեամբ, քրիստոնէական գրականութեամբ ու արուեստով ամբողջացաւ՝ քրիստոնէական Եկեղեցիների համակարգում դառնալով մի ինքնուրույն ու անշփոթելի ուղղութիւն: Միով բանի, Հայաստանեայց Եկեղեցու դաւանաբանութիւնը, իր մէջ ներառելով մեր ազգային խառնուածքի, բնաւորութեան ու պատմական հոգեբանութեան ամենաբնորոշ տարրերը, լիովին հայացաւ: Աւելի կարճ՝ ինչպէս որ քրիստոնէական պարզ խաչը դարձրինք անկրկնելի և զուտ հայկական խաչքար, մօտաւորապէս նոյն կերպ էլ քրիստոնէութիւնը դարձրինք հայադաւանութիւն:

Շարունակելի
Ռաֆայել ՉԱՄԱՐՉՈՒՄԵԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԿԻՑ սենյակում

Սկիզբը՝ թիվ 2-3

- Տե՛ր հայր, շարունակե՛ք ընթանալ Պոդոս առաքյալի «Սիրո օրհներգի» շավիղներով. «Սերը ամեն բանի դիմանում է»...

- Որե՛տ մեկը չի ուզում սիրո պակաս ունենալ: Ամեն մարդ ուզում է սիրել և շրջապատված լինել սիրով: Սակայն հոգեւոր տեսողություն ունեցող մարդիկ նաեւ մանրախույզ գնում են սիրո ամբողջ «մեխանիզմը» եւ գնելով տեսնում են, որ «սերն իր մեջ պարունակում է մացած բոլոր օրենքները», ճիշտ այնպես, ինչպես ամենամեծ պատվիրանից են կախված «ամբողջ օրենքը եւ մարգարեները»՝ ըստ Տիրոջ խոսքի (հմմտ. Մատթ. ԻԲ 35-40):

Եվ ահա առաքյալն ասում է. «Սերը ամեն բանի դիմանում է»: Սերը՝ բոլոր օրենքների լրումն ու գլուխը, դիմանում է ամեն բանի, քանզի սիրով լցված սիրտն Արարչից ստանում է գերբնական զորություն: Բայց պիտի ավելացնեն, որ սերը, սիրառատ սիրտը դիմանում են ոչ միայն դժվարություններին, այլեւ... հաջողությա՜նը, նույնն է թե՛ գայթակղություններին, ինչի մասին ասում է առաքյալը՝ «չի նախանձում, չի ամբարտավանանում, չի գոռոզանում, բարկությամբ չի գրգռվում, չար բան չի խորհում, անիրավության վրա չի ուրախանում» եւ այլն...

- Եվ «ամեն բանի հավատում է»...

- Այս արտահայտությունը, անշուշտ, բառացիորեն չպիտի ընկալել: Պոդոս առաքյալը, որ աստվածային սիրո ոլորտներում էր եւ մաքուր հավատքի ոլորտում, «ամեն բան» ասելով, այս դեպքում նկատի ուներ ամեն հոգեւոր ճշմարտությունը: Այսինքն՝ հավատքի սրբությանը վերաբերող ամեն ճշմարտություն սիրով լցված սրտի համար հավատալի է: Սիրով լցված սիրտն ի՞նչ է փնտրում՝ դարձյա՛լ սեր: Իսկ ճշմարիտ հավատքի ընթացքին մշտապես ուղեկցում են հույսն ու սերը: Քրիստոսն ասաց. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա եւ խմի: Ով ինձ հավատում է, ինչպես Գիրքն է ասում, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն» (Յովհ. Է 37-38): Այսինքն՝ Քրիստոսի մոտ գնալը հավատքով է լինում: Խմել նշանակում է հավատքն ընդունել: Հավատքն ընդունելով՝ ընդունում են նաեւ սիրո աստվածապարզելի պտուղը: Եվ ով որ խմի, նրա սրտից կենդանի ջրերի գետեր են բխում, այսինքն՝ սկսում են սեր հորդել:

- «Մշտապես հույս է տածում»...

- Սիրով լցված սիրտը երբեք հույսը չի կտրում Աստծուց: Իսկ անհուսությունը նաեւ սիրո բացակայության կամ պակասի արդյունքն է: Եվ ահա սիրո բացակայության պատճառով հուսահատված հոգիներ

ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՐ

Սեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

րը, իրենց տկար մտքով քննելով սեփական վիճակը, եզրակացնում են, որ այլեւս ոչինչ իրենց չի կարող օգնել՝ ո՛չ աստվածապաշտությունը, ո՛չ աղոթքը, ո՛չ այլ ինչ: Անաչառ քննությամբ ի վերջո պիտի պարզվի, որ սրանց ուզածն ընդամենը կյուրական մի բան է եղել: Այնպես ի՞նչ անհուսության մասին կարող է խոսք լինել, երբ որ Հույսի Ակունքը՝ Քրիստոսը, հարության ու հավիտենական կյանքի ավետիսն է շնչում մեր ականջներին ամեն օր ու ամեն ժամ: Հույսը կա՛մ լինում է, կա՛մ չի լինում: Եթե կա հույսը, այն երբեք չի մարում: Իսկ սերը՝ «մշտապես հույս է տածում»:

- «Ամեն բանի համբերում է»...

- Համբերելուն, ճիշտ է, անդրադարձել ենք, բայց ավելորդ չեն համարում այս առիթով հիշել Մեծ համբերողներից մեկին՝ Հոբերանելուն՝ նաեւ հասկանալու համար, թե սերն ինչ դեր ուներ նրա համբերության պարագայում: Ամեն բանի տեր Հոբը, կորցնելով ամեն ինչ՝ ունեցվածքը, զավակներին, առողջությունը, այդ վիճակում անգամ չըմբոստացավ Աստծու դեմ: Ավելին՝ երբ կինը, հանդիմանելով նրան, դրդում էր անիծել Աստծուն եւ մեռնել, Հոբն ասաց. «Խոսեցիր ինչպես մի անգամ կին»... Նման ակուր տառապանքների ոչ ոք չի կարող համբերել, եթե սրտում սեր չունենա՛ս աստվածային, զորեղ, ապրեցնող: Եվ Քրիստոսը՝ մեր Փրկիչը, մի՞թե ի սեր մարդկության չէ, որ հանձն առավ ամենայն չարչարանք, ծեծ, նախատինք, թուրք, հայհոյանք ու վերջապես՝ խաչի անարգ մահը եւ... համբերեց: Հնարավոր է պատկերացնել այս ամենը՝ առանց սիրո: Եվ մի բան էլ. ընտանիքի համար ամենակարեւորը ի՞նչն է. սերն է, չէ՞: Դե, եթե սերն է, սիրելի՛ քրիստոնյաներ, եւ սերն էլ «ամեն բանի համբերում է», ուրեմն մի՛ ասեք՝ կինս (ամուսինս, երեխաս) ինձ հասցրին այս վիճակին, դրա համար էլ չհամբերեցի... Չէ՛, այստեղ միայն համբերության պակասի խնդիրը չէ, այլեւ, որ ամենակարեւորն է, սիրո՛ պակասի խնդիր կա:

- Եվ վերջապես՝ «Սերը երբեք չի անհետանում»: Ըստ առաքյալի՝ մարգարեությունները կարող են ջքանալ, լեզուները կլռեն, գիտությունը կանցնի, ամեն ամեն բան կարող է անհետանալ, բայց սերը երբեք չի անհետանա: Այնքան տարողունակ է այս արտահայտությունը եւ այնքան ճշմարիտ, որ թվում է... այս մասին խոսելն անգամ մեղք է:

- Համաձայն եմ: Ե՛կ, ուրեմն, չխոսենք, այլ ուղղակի պատկերացնենք մի վիճակ: Աստված վճռել է՝ վերջ. Ահեղ դատաստանի օրն է, երբ երկինքն ու երկիրը պիտի փոխվեն, մեռելները հարություն պիտի առնեն, եւ «թացը չորից պիտի գատվի»: Եվ այդ ժամանակ պիտի ու անօրեն մարդիկ հավիտենական կործանումն են ժառանգելու եւ այլեւս չեն խանգարելու Աստծու զավակներին: Ու հանկարծ պարզվելու է, որ մեղքն իսպառ վերացել է, եւ մնացել է միայն Սերը՝ արարչության առաջին օրվանից մինչեւ աշխարհի վախճանն ունեցած իր բյուրավերպ դրսևորումներով: Եվ ոչինչ չի մոռացվել՝ անկեղծ, մաքուր սրտով, սիրով արված որեւէ գործ, սիրով արտաբերված որեւէ բան, մխիթարող խոսք, անգամ չասված, բայց սիրո՛ ապրված որեւէ թրթիռ: Եվ ուրեմն՝ սերը չի անհետանալու: Որովհետեւ Արարիչն Իր պատկերով ու նմանությամբ կերտած Իր սիրելի զավակներին մշտապես պիտի բնակեցնի Բերկության դրախտում՝ հավիտենական ուրախության մեջ, ուր Արարչի եւ մարդու մեջ հարաժամ պիտի հորդի աստվածային սուրբ սերը:

- Առաքյալն իր «Սիրո օրհներգը» ավարտում է հայտնի նախադասությամբ. «Բայց արդ՝ մնում են հավատ, հույս, սեր, սրանք՝ երեքը. եւ սրանցից մեծագույնը սերն է» (Ա Կորնթ. ԺԳ 13): Այն, որ առաքյալը սերն է համարում մեծագույնը, պատճառաբանվում է նաեւ աստվածաբանական մեկնությամբ եւ բխում է քրիստոնեական վարդապետության բուն էությունից: Այն է՝ հավատը եւ հույսը մարդուն պետք են առավելապես այն կյանքում՝ հավիտենականը ժառանգելու համար: Իսկ արդեն Երկնքի թագավորության մեջ դրանք, չասենք ավելորդ, բայց արդեն «իրենց գործը կատարած լինելով»՝ մի տեսակ հանգստանում են կամ «անհետանում են»՝ մարդուն վերջին եւ ցանկալի հանգրվանը հասցրած լինելով: Մինչդեռ սերը շարունակվում է եւ լինելու է միշտ, նաեւ երկնքի թագավորության մեջ, եւ առաքյալի ասած «երբեք չի անհետանում»-ը նաեւ ա՛յս է նշանակում: Եվ իսկապե՛ս հավատի եւ հույսի կարիք այնտեղ չի լինելու:

- Սուրբ վարդապետների այս մոտեցումը, անշուշտ, չափազանց հետաքրքրական է: Եվ մենք չե՛, որ պիտի գնահատենք, բայց փորձենք գոնե հասկանալ: Ի՞նչ է հավատը: Հավատքն այն է, երբ դու չես տեսնում



Արարիչ Աստծուն, բայց վստահում ես, որ կա: Ուրեմն՝ հավատքը մինչեւ Ահեղ դատաստան, մինչեւ Աստծո ներկայության մեջ մտնելն է: Դրանից հետո այլեւս վայելում ես աստվածային ներկայությունը: Իսկ այս կյանքի մեջ, մարդկանց մեղքերի պատճառով, չափազանց շատ սահմանափակումներ կան, որոնք հավատքի կարիք են ստեղծում: Մենք ինչո՞ւ այս կյանքում չենք կարողանում հարաժամ Աստծու հետ մեր հարաբերությունները ներդաշնակության մեջ պահել. որովհետեւ ընկնում ենք կրքի եւ մեղքի ազդեցության տակ: Ել չե՛մ ասում, որ մենք իրականում ընդամենը պանդուխտ ենք այս երկրի վրա: Թումանյանն ասում է՝ «Մենք ամենքս հյուր ենք կյանքում Սեր ծննդյան փուլ օրից...»:

Ճիշտ նույն ձևով էլ հույսը մեզ պետք է այն կյանքում, որպեսզի մեր հավատքը հույսով իրագործենք: Իսկ երբ դեմ առ դեմ կանգնենք Արարչին, տեսնենք ու վայելենք Նրա ներկայությունը (սբ վարդապետները սա կոչում են «երանելի տեսություն»), կլինենք հավերժական բերկության մեջ: Այդ ժամանակ մեզ համար այլեւս հավատքի ու հույսի խնդիր չի լինելու, քանի որ անմիջապես հարաբերվելու ենք Աստծու հետ: Իսկ սերը պիտի հորդի:

- Ինչո՞վ պետք է բացատրել սիրո պակասը մարդկանց մեջ. Արդյո՞ք միայն կյանքի դժվար պայմաններով, աղքատությամբ...

- Ես համաձայն եմ, որ կյանքի դժվար պայմանները բավականին լուրջ հետք են թողնում մարդու հոգեբանության վրա: Բայց հավատացնում եմ, որ ամենակարեւորը հոգեւոր ոլորտն է, որովհետեւ սերը հոգեւոր երեւույթ է: Սերը, եթե կուզեք, նաեւ մտածողության տեսակ է: Սեր մեծերը մեզ ո՞նց են դաստիարակել՝ «Ոչինչ, քո եղբայրն է, ներողամի՛տ եղիր» եւ այլն, եւ արդյունքում մենք ունենք սիրո, համբերության, հարգանքի մի հենք: Այստեղ, հավատացե՛ք, աղքատությունը կապ չունի: Եթե աղքատ մարդն իր եղբոր հանդեպ սեր չունի, փողով սեր չէք ստեղծի. փորձե՛ք նրան դրամ տալ, եւ նա եղբոր կոկորդը կկրծի...

Շարունակությունը՝ էջ 8

Հայոց ցեղասպանության ազդեցությունն արեւմտահայ մշակույթի վրա

Սկիզբը՝ էջ 5

Այս գաղափարախոսությունը կարելի է ձեռնարկել հետեւյալ կերպ. «Մենք՝ հայերս, արժանավոր եւ անմեղ ազգ ենք, առաջին քրիստոնյա ազգն աշխարհում եւ թուրքերի բարբարոսության գոհը: Թուրքը հակաՔրիստոս է (նեռ), իսկ մնացյալ ազգերը նրանից էապես չեն տարբերվում: Այս աշխարհը թշնամաբար է տրամադրված մեր հանդեպ, ուստի լավ հայը պետք է շփվի միայն հայերի հետ: Սեր արվեստագետները պետք է գրեն գոյապայքարի ու ազգապահպանման մասին եւ պիտի ծառայեն ազգի վեհ շահերին» (տե՛ս R. Hovhannisian, նշվ. աշխ., էջ 171): Ահա այսպիսին է հայկական ազգային գաղափարախոսությունը: Հարկ է հավելել, որ վերջինս չի ծնվել ցեղասպանության արդյունքում: Մեծ ե-



ղեռն ընդամենը բացարձակացրել է այդ գաղափարախոսությունը: Սփյուռքահայ գրողները, որպես կանոն, չէին հանդգնում բացեփառ եւ ուղղակիորեն գրել ցեղասպանության իրողության մա-

սին: Հայ գրողները վերաստեղծում էին եղեռնից առաջ գոյություն ունեցած գյուղական, հովվերգական աշխարհը: Այսպիսով, այնպիսի թյուր պատկերացում է ստեղծվում, թե ցեղասպանու-

թյուն ընդհանրապես չի եղել, իսկ հայ գրողները պատկերում են հարազատ գյուղերում անցկացրած իրենց մանկության տարիները (այդ գրողներից առավել հայտնի են Համաստեղը, Բենիամին Նուրիկյանը, Վահե Հայկը): Սփյուռքի գրականությունը, ընդհանուր առմամբ, մի ազգի գրականություն է, որը կարծես հիպոստացված է ցեղասպանության պատճառած բարոյական ցավից եւ նսեմացումից: Մեծ եղեռնը մի տեսակ արհավիրք էր, որից հետո ամեն բան ավարտվում է, ու ոչինչ չի սկսվում, նույնիսկ եթե այդ դեպքերից կես դար էր անցել: Հայերը, գրեթե հիպոստացված լինելով իրենց տառապանքից, ի գորու չեն լիովին բացահայտելու իրենց ստեղծագործական ներուժը, ունակ չեն մտածելու կամ նկարագրելու իրենց գլխով անցած փորձությունները:

Միակ բանը, ինչ նրանք կարող են անել, շարունակ կրկնելն է, որ իրենց հետ բառերով աննկարագրելի ինչ-որ բան է կատարվել: Տարիներ շարունակ եղեռնի ականատեսների պատմությունները, ծիսական ոգեկոչումները, ամեն տարի կազմակերպվող հանրային ճառերը եւ եկեղեցական արարողությունները պահպանում են ինչ-որ առեղծվածային արհավիրքի զգացողություն, որը միավորում է անհատներին: Սփյուռքում դժվար թե գտնվի գեթ մեկ ընտանիք, որը չունենա 1915 թ. դժոխքի հետ կապված իր պատմությունը: Այս տառապանքը հայերին միասնական է դարձրել, նրանց ուժ է տվել ու երաշխավորել հայության հարատևումը:

Շարունակելի
Տիգրան ՍԱԼՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՆՈՎԻՎՆ ՈՒ ՆՐՎ ՆՈՏԷ

ՄԱՐԴԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

Ձեր հարցերին պատասխանում է եղիա արեղա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

- Հայր սուրբ, ինչո՞ւ է ժամանակը համարվում անգին գանձ եւ պարգև: Կարելի՞ է ասել, որ ինչպես իր կյանքի, այնպես էլ ժամանակի վրա մարդը կարգված է որպես տնտես՝ այն բարվոք, Աստծու կամքի համաձայն տնօրինելու համար:

- Ժամանակն Աստծու պարգևն է մարդկությանը: Աստված, ստեղծելով ժամանակը, մարդուն տնտես, տնօրեն է կարգել այդ ժամանակի վրա: Բայց մարդը տնտես է կարգված ոչ միայն իր ժամանակի, այլև իր կյանքի վրա: Սակայն մենք այսօր ցավալիորեն տեսնում ենք հակառակ երևույթ, երբ մարդը վատնում, մսխում է այդ ժամանակը՝ առանց գիտակցելու, որ պատասխանատու է այդ ժամանակի օգտագործման համար: Մենք այսօր ապրում ենք այնպիսի մի ժամանակահատվածում, երբ տեղեկատվությունն անհամեմատ շատ է, երբ ամեն բայլափոխի մարդը բախվում է տարբեր տեսակի լուրերի, տեղեկությունների, եւ այնքան շատ է լինում այդ կուտակումը, որ երբեմն խճճվում է այդ ամենի մեջ եւ կորցնում իր անձը: Այդ փնտրույթի մեջ մենք մոռանում ենք մեր հոգու մասին: Այսօր հատկապես երիտասարդները եւ նոր աճող սերունդը կարիք ունեն ժամանակի ճիշտ օգտագործման: Այսօր տեխնիկան, գիտությունը բավական

կլինեն ավելի հեշտասեր, քան աստվածասեր» (Բ Տիմոթ. Գ 2), ինչն այսօր տեսնում ենք ամենուր:

- «Մարդու երջանկությունը հաստատված է ժամանակի բարվոք կիրառության մեջ»,- ասում է հայրերից մեկը: Այսինքն՝ մարդը երջանիկ է այնքանով, որքանով կարողանում է ճիշտ տնօրինել իր ժամանակը: Ի՞նչ կասեք, հայր սուրբ:

- Միանշանակ ես համաձայն եմ այս մտքի հետ, որովհետեւ յուրաքանչյուր խոսք, որ ինչու է Եկեղեցու հայրերի շուրթերից, ճշմարիտ է: Եկեղեցու հայրերն այնքան իմաստուն կերպով են տնօրինել իրենց կյանքը եւ ժամանակը, որ ոչ միայն հոգին է շահել, այլև իրենց մտավոր, գիտական գործունեությունը: Այսինքն՝ ժամանակը ճիշտ օգտագործել չի նշանակում այն ամբողջությամբ հոգեւորի վրա ծախսել, քանի որ մարդն ունի նաեւ մարմին, որն ունի հանգստի կարիք: Մարմնի եւ հոգու մեջ պետք է ներդաշնակություն պահել: Օրինակ, եթե մենք պահք ենք պահում, տարվա բոլոր օրերը չենք պահում, այլ միայն 180 օր, իսկ մնացած 180 օրերն ուտիքի օրեր են: Սա նույնպես մեր հայրերի իմաստուն տնօրինումն է, որ պետք է՝ մարմինը շահի, եւ հոգին: Նույնպես եւ ժամանակը պետք է այնպես տնօրինենք, որ կարողանանք այդ ներդաշնակությունը պահել: Բայց Սուրբ Գիրքն ասում է, որ «հոգին առավել է, քան մարմինը», իսկ մենք այսօր առավել տեսնում եւ հոգում ենք մարմնի կարիքները:

- Ժամանակի իմաստուն տնօրինում ասելով՝ ի՞նչ նկատի ունեք:

- Օրվա մեջ մենք տարբեր պարտականություններ ունենք: Շատերն աշխատում են տարբեր բնագավառներում, ոմանք ունեն ընտանեկան պարտականություններ, երեխաներ են մեծացնում, դաստիարակում, ոմանք հիվանդներ են խնամում եւ այլն, բայց այս ամենի կողքին մենք չմոռանաք, որ ունենք Աստված, եւ մեր հոգին կարիք ունի Աստծո հետ հաղորդակցության: Ժամանակ տրամադրենք մեր հոգուն, մեր հավատքի կյանքին, մեր աճին, զորացմանը՝ չանտեսելով մյուս պարտականությունները, այսինքն՝ ժամանակը ճիշտ տնօրինենք՝ բաշխելով խիստ ներդաշնակ կերպով:

- Հայր սուրբ, Պողոս Արդիանուպոլսեցին ժամանակը համեմատում է սրղնթաց հոսող գետի հետ, որն անդուլ հոսում է՝ իր հետ տանելով նաեւ մեր կյանքը, նաեւ՝ աղեղից արծակված նետի հետ, որն այլեւս ետ չի դառնում: Փաստորեն, ոչ մի րոպե, վայրկյան, ակնթարթ մեր կյանքից ետ չի դառնալու, ահա թե ինչու է կարեւոր ուշադրություն դարձնել թե ինչպես ենք տնօրինում մեր ժամանակը:

- Այո՛, եւ ճիշտ այս իմաստով Սուրբ Գիրքն ասում է. «Ժամանակը թանկ է. րոպեները ծախու առեք», այսինքն՝ ճիշտ օգտագործեք: Ժամանակը թանկ է, որովհետեւ անվերադարձ է, մեր կյանքից է գնում: Այսօր նաեւ մեկ ուրիշ համընդհանուր երեւույթի կարող ենք հանդիպել առավել հասակով մարդկանց շրջանում. ես հաճախ եմ նկատել, որ մեծահասակները հավաքվում են բակերում եւ ժամերով տարվում թղթախաղով կամ նարդի խաղալով՝ օրն այդպես անցկացնելով: Ինձ համար սա ժամանակի վատնում է: Մի՞թե չէր կարելի այդ ժամանակն ավելի արդյունավետ օգտագործել: Բայց դա գալիս է կրոնական դաստիարակությունից, հավաքական գիտակցությունից: Եթե այսօր մեր ժողովուրդը կրոնական դաստիարակություն չունի, որովհետեւ խորհրդային անաստված ռեժիմը պարզապես գլխատեց մեր հավատքը, մենք այսօր ուրիշ բան չենք կարող պահանջել, պետք է տանք կրոնական դաստիարակություն նոր սերնդին:

Այսօր գայթակղությունները շատ են... Եվրոպայից մենք միշտ վերցնում ենք այն, ինչ հակաբարոյական է. դա խեղում է նոր սերնդի առողջ մտածողությունը, եւ սրան մեծ մասամբ նպաստում են անիմաստ սերիալները: Ես զարմանում եմ, թե ինչպես են մարդիկ տարվում դրանցով. ոմանք նույնիսկ կրկնություններ են դիտում. սա անմտություն է: Սերիալ դիտելու ժամանակն օգտագործեք Սուրբ Գիրք կարդալու, Եկեղեցու հայրերի գրվածքներին, խրատներին ծանոթանալու համար: Ըիշտ օգտագործենք մեր ժամանակը, որ հետո չասենք. «Ես իմ կյանքից ոչինչ չհասկացա»: Սողոմոն Իմաստունն ասում է, որ այս կյանքն ունայնություն է. «Ունայնություն ունայնությանց, ամեն ինչ ունայն է» (ժող. Ա 2): Երջանկությունը միայն Աստծո մեջ է, Աստծո հետ հարատեւ հաղորդակցության մեջ:

Շարունակությունը՝ էջ 8



զարգացել են, եւ մարդուն զբաղեցնելու հնարավորություններն են շատացել, եւ շատ հաճախ մարդը զբաղվում է անիմաստ բաներով: Այսօր ես տեսնում եմ դարձողական տարիքի պատանիների, որոնք օրվա մեծ մասը զբաղված են համակարգչային խաղերով կամ հեռուստատեսային անճաշակ եւ անիմաստ հաղորդումներով, որոնք ոչ միայն դաստիարակչական կողմ չունեն, այլև ճիշտ հակառակը՝ մարդու մեջ սպանում են այն հոգեւորը, բարոյականը, արժեքավորը, որը մարդուն կերտում է որպես մարդ: Կամ համացանցային տարաբնույթ կայք-էջերը, որոնք պարզապես իրենց բնույթով հակաքրիստոնեական են: Տրվելով այսպիսի անիմաստ զբաղմունքների՝ մարդը կորցնում է ժամանակի զգացողությունը: Մինչդեռ հարկ է ժամանակը ճիշտ օգտագործել՝ ընտրելով ճիշտ զբաղմունքներ: Օրինակ՝ Սուրբ Գրքի ընթերցանությունը հիանալի զբաղմունք է՝ հոգեւոր կրթությանը նպաստող, կամ աղոթքը: Այսօր մենք քանի՞ վայրկյան ենք տրամադրում աղոթքին մեր օրվա հոսքի մեջ. չափազանց քիչ, բայց որքա՞ն ժամանակ կարող ենք տրամադրել հեռուստատեսային սերիալներին, պարզապես թերթերին՝ կարդալով, թե ինչ են գրում այս դերասանի կամ այն երգչուհու մասին՝ նրանց կյանքի դրվագների մանրամասն նկարագրություններով: Մենք ժամանակը ճիշտ չենք օգտագործում, իսկ դա գալիս է ժամանակի ոչ ճիշտ ընկալումից:

- Փաստորեն, մերօրյա մարդը ոչ միայն չի ճանաչում ժամանակի հարգն ու արժեքը, այլև այդ ժամանակը պարզեւղ Աստծուն թերեւս օրվա մեջ մեկ րոպե անգամ չի հիշում՝ շնորհակալություն հայտնելով այդ անգին պարգևի համար:

- Այո՛, չի հիշում, քանի որ այսօր մարդու կյանքը խիստ նյութականացած է, մարդն ավելի նյութապաշտ է, քան աստվածապաշտ, ինչպես սուրբ Պողոս առաքյալն է ասում, որ «Վերջին օրերին մարդիկ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Այլ խոսքով՝ բանաստեղծը բնավ չի զգում նյութի սահմանափակվածության վտանգ, դեռ ավելին՝ առանձին գործերում բանավիճում է այդպիսի սխալ կարծիքի դեմ («Իմ Որոտանիս»):

Մարդու եւ բնության միասնությանն ու ընդհանրությանը Հ. Սահյանը հասավ աստիճանաբար: Սկզբում նա հայտնաբերեց բնության հզոր ու վիթխարի աշխարհը, որի քնարական ընկալումը դարձավ արժանապատիվ շարժառնային: Իր ձեւերի, գույների ու շարժումների մեջ ամբողջացող բնաշխարհն սկսում է բացել նաեւ իր «ներաշխարհը» եւ հոգեւոր հաղորդակցման տանել բանաստեղծին: Այս հաղորդակցումն ստեղծում է երկկողմանի մի գրույց մարդու եւ բնության միջեւ, որի արդյունքը լինում է մարդու եւ բնության «զուգահեռողով» ամբողջությունը:

Նախ՝ Սահյանն իբրեւ բանաստեղծ, որն իր պոեզիայի անհատականացված քնարական հերոսն է, բնության հետ հաղորդվում հաղորդակցվում է իբրեւ գերագույն ճշմարտություն եւ նրանով փորձում ճանաչել իրեն: Դիմելով բնությանը՝ նա ասում է. «Օգնի՛ր իրար բերեմ Բեւեռներս բոլոր, Օգնի՛ր՝ ամբողջանամ» («Բնություն»): Միաժամանակ բնությունը դառնում է կեցության կայուն չափանիշ ու սերունդների հաջորդական երթը կարգավորող ուժ («Ապրում ենք, վկա են լեռները»):

Այս նախադրյալի առկայությամբ ձեւավորվում է սկիզբը՝ մարդ-բնություն միասնությունը, որը ոչ թե սոսկ փոխադարձ կապվածության արդյունք է, այլ երկվորյակների ծննդաբանության («Քարափի վրա», «Քարափը»): Այդտեղից էլ բնության երեւույթները որպես հոգեւոր ապրումի համեմատության կամ զուգորդության հիմք տեսնելու զգացողությունը: Իսկ բանաստեղծի գործն այս դեպքում անշունչ քարերի ու շնչավոր հողմերի «լեզվի» թարգմանությունն է. «Աչքն ու ականջն եմ ես մայր բնության, գիտակցությունը նրա մարմնավոր...» («Դու փոխ ես տվել...»): Մի կողմից մարդը բնականացվում է՝ ըստ բնության օրենքների, մյուս կողմից բնությունն է մարդկայնանում՝ ըստ մարդու հոգեւոր կյանքի օրենքների: Ժամանակատարածական այս մեծ ընդգրկումների մեջ մարդն ու բնությունը համատեղ հաստատում են աշխարհի հավիտենականության օրենքը.

*Ուղքիս տակ մի մեծ սար է սարսռում,
Եվ գլխիս վերեւ երկինք է մի մեծ...
Տիեզերքն իմ մեջ իրեն է փնտրում
Եվ զոնգում է տիեզերքն իմ մեջ:
Տիեզերքի հետ խառնվելով այսպես, -
Իրար խառնելով դարերն ու տարիս,
Տիեզերքով մեկ հաստատում եմ ես
Հավիտենությունն ականթարթային:*

Բնության եւ մարդու հաղորդակցության ընթացքում ձեւավորվում են բնության «կյանքի» եւ մարդու կյանքի անցած ճանապարհի պատկերը, նրանց պատմությունն ու կենսագրությունը:

Նախ՝ բնությունն իր գիրկն է բացում աշխարհի շարժունակներին հոգևած մարդու առաջ եւ ապա՝ աստիճանաբար արմատավորում վերադարձի մի տրամադրություն, որը, ընդգրկելով տարբեր ուղիներ՝ վերադարձ դեպի մանկություն, հայրենի եզերք, հայրական տուն, ի վերջո ձեւավորում է ասելիքի հիմնական շեշտը՝ վերադարձ դեպի կեցության պարզ ու բնական նախահիմքերը («Մոռանալ կտա», «Ամեն ինչ պարզ էր», «Օրը մթնեց», «Հայրենի գյուղ», «Օմար Խայամ», «Վերադարձ»): Նա այսպես է դիմում հայրենի գյուղին.

*Քո գիրկն եմ եկել, որ ձայնագրեմ
Քո պատանեկան
Առողջ, անվթար շնչառությունը,
Որ քո բարությանը վերանորոգեմ
Մի ինչ-որ չափով
Խախտված-խաթարված իմ բարությունը...
Ու վերադառնամ ես վերածնված...
Վերադարձն, այսպիսով, դառնում է ինքնաորոնման ձեւ, որը նրան հասցնում է իր ծագումնաբանական բնական սկզբին:*

Շարունակելի

Հավիթ ԳԱՄՊՐԵՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԵՂԵՐԵՐԳ Եղիշե Չարենցին

Ի՞նչ հեշտ է մատնիչ դարձրել մեկին Հեղափոխության դեերի համար, Երբ որ բառացի չորսում են բլին, Երբ տանում է դառնում անհնար:

Ի՞նչ հեշտ է դահիճ դարձրել մեկին... Բայց գիտե՞ս, Չարենց, ո՞վ մեծ Բրահման, Ինչ ասավ Բակունցն այն օրվա ծեղին, Երբ տանում էին գնդակահարման:

Իսկ Բակունցն ասավ, երբ եղի թաղերը Մութ խցից մահվան ձորն էին տանում՝ «Այս ազգի համար լացող աչքերը, Ավա՛դ, բոլորից շուտ են կուրանում»:

Այն լուսադեմին եթերում վերին Մի աստղ պայծառ ցուլաց ու շիջավ, Եվ ալպիական մանուշակներին Այնժամ ցողի տեղ արտասուք իջավ:

Աստվածաշնչից մինչև ձեր ծառան Գրվել են դարեր բյուր ակրոստիքոս,- Այս գիրքը միայն չներվեց նրան Ու այրվեց որպես պիղծ հերետիկոս:

Լուսավորվել է աշխարհը կարծես, Խավարն էլ ոնց որ շատ չի թանձրանում, Երբ միջնադարյան տիտանների պես Գրքերն են արդեն խարույկ բարձրանում:

Եվ բանագեղծներ, բանբուխներ ետին Ու նրանց շարքում Օբուվն ու Քսայեն Հանդգնում էին դաս տալ պոետին, Որ իրենց խելով Չարենցին գապեն:

«Ո՞վ է Պիերրոն՝ ինքնակոչ հանճար, Որ հավակնում է փառքն Աբիլլեսի. Փակեցեք դրան խցում անպատճառ՝ Մեծ առաջնորդը ծաղրը չլսի»:

Եվ ուրիշ մեղքեր բարդեցին վրան (Որ մեջ չբերեն պողպատե մարդուն). Տեղից ելնող դարձել էր բերան Ու մեծ պոետին վճիռ էր կարդում:

Գեսպոտը փայլ է կորզում հանճարից, Որ շուք տա իրեն մտքի, արվեստի. Բայց ծպտալ անգամ բարուց ու չարից՝ Թույլ չի տա ոչ մի հանճար ըմբոստի:

Ըմբոստ ես՝ պիտի ձեռնասուն դառնաս, Մտքիդ ու լեզվիդ կրես ժանտ շղթան. Ըմբոստ հանճարին էլ ի՞նչ վեհ Պառնաս-Նրա բարձունքն է միայն Գողգոթան:

Այսպես նա ելավ վերջին ճանապարհ, Գիտեր՝ գնում է դեպի Էշաֆոտ. Թողել էր ետև կուռքեր չարափառ, Թողել անցյալում շորշոփ ու շվոթ:

Եվ ինչո՞ւ իրեն նա կոչեց Չարենց,- Ո՞ւմ էր սպառնում իր այդ անունով, Երբ ինքը իրեն խաչին չարչարեց Ու վերջին երգը գրեց արյունով:

Փառք էր վայելում ամեն ձեռնածու, Որ երգ էր ձոնում Տունդրայի տորֆին, Իսկ այս պոետին՝ հիվանդ մահացու, Խնայում էին փրկարար մորֆին:

Երգել էր անգամ «Իլյիչ եւ կոշիկ», Հեղափոխություն, քշվառին անտուն. Երազեց, Մոմա՛, հմայքը քո շիկ, Մեռավ՝ մարդասեր Մովսեսի բանտում:

Նա, ով կայծ չունի իր հանգած սրտում, Գրոշ է դարձնում ամեն ձորձը հին. Ուրիշի մաշված մտքերն է սերտում, Որ ձեռնատու են իրեն այդ պահին:

Նա հին մոխիրն է քրքրում հլու՝ Ոչ թե նրա մեջ կայծ բորբոքելու, Այլ նրա համար՝ չլինի՞ հանկարծ Գեթ մի կայծ մնա մոխրի մեջ հանգած:

Այսօր էլ նման մարդիկ մերկանդան Նրա դեմ նետած լաթն են կարկատում, Է՛հ, նրանց ի՞նչ փույթ, թե ամեն անգամ Չարենցի սրտից արյուն է կաթում:

Երևան. 1987 թ.

ԱՌՎՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԻ

Սկիզբը՝ էջ 6

- Տղամարդու եւ կնոջ սիրո մասին...

- Երկու ձեռով է այն արտահայտվում: Մեկը հոգեւոր սերն է՝ հոգուց հոգի, մյուսը սեռական է՝ ֆիզիկական սիրո կիրքը: Վերջինը պետք է որոշակի չափի մեջ սահմանափակված լինի: Ել չեմ ասում, որ այն ընտանիքից դուրս չպիտի գա՝ շեղվելով դեպի ուրիշ կին (տղամարդ), այլապես դա արդեն սեր չէ, այլ շնություն: Եվ թող որեւէ մեկը դրան այլ անուն չտա եւ իր շնությունը սեր չկոչի: Առանց ամոթի ու երկյուղի ասում են՝ սա կինն է, իսկ այս մյուսը՝ սիրածը: Ի՞նչ սիրած, ի՞նչ սիրո մասին է խոսքը, երբ որ դա ատելություն է ընտանիքի սրբության դեմ, ատելություն ու կործանում է սեփական մարմնի դեմ: Իսկ մեր մարմինը... «Զգիտե՛ք, թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Զոգու», - առաջալս ասաց (Ա Կորնթ. 2 19): Եվ մեկ այլ տեղ՝ «Եթե մեկն Աստծու տաճարն ապականի, Աստված էլ նրան պիտի ապականի. որովհետեւ սուրբ է Աստծու տաճարը, որը դուք եք» (Ա Կորնթ. 9 17):

- Սիրե՛լ, թե՛ սիրված լինել. Ո՞րն է անավել կարեւոր:

- Մարդու համար ամենակարեւորն այն է, որ իր մեջ սեր լինի, ի՞նչը ընդունակ լինի սիրելու, որ ի՞նչը տա, իրենից բխի սերը: Իսկ սիրված լինելն աստվածային շնորհ ու պարգև է, որի համար միշտ պետք է երախտապարտ լինել Արարչին:

- Ամփոփե՛ք. ի՞նչ է տալիս մեզ՝ ամեն մեկիս, սիրո առկայությունը, եւ ի՞նչ է խլում մեզանից դրա բացակայությունը:

- Սերը տալիս է երջանկություն, ուրախություն, համբերություն, խաղաղություն, բարի գործերի պատրաստակամություն: Սերը կյանքի եռությունն է: Սերն ամենափնտրված առաքինությունն է: Մարդու կյանքի հիմքն ու հիմնաքարն է սերը: Սերը... Աստված է: Ծիշտ այնպես, ինչպես որ Աստված սեր է: Իսկ առանց սիրո, Աստված մի՛ արասցե, մեկը գրկվում եք նախ Աստծուց, ապա՝ Աստծուն պատկանող ամեն ինչից: Առանց սիրո մարդն անհույս է, տխուր ու դժբախտ:

Հյուրընկալեց Հայկ ԿԱՐՄՊԵՏՅԱՆԸ

ՄԱՐԴԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ



Սկիզբը՝ էջ 7

- Դարձյալ Եկեղեցու հայրերն ասում են, որ մարդը չպետք է ուրախանա, թե շատ տարիներ ապրեց, այլ պետք է անդրադառնա, թե ինչպես ապրեց՝ բարի՞, թե՞ չար կյանքով: Փաստորեն, կարեւորը մարդու ապրած կյանքի որակն է:

- Անշուշտ, կարեւորը մարդու ապրած կյանքի որակն է: Մեկը կարող է կարճ, բայց շատ իմաստալից, բովանդակալից կյանք ապրել: Օրինակ՝ գործնորհի մեջ էլ տեսնում ենք այդ. Մեծարեցն ինչքան կարճ ապրեց, բայց որքան հարուստ հոգեկան աշխարհ կտակեց հաջորդ սերունդներին: Եկեղեցու հայրերն էլ երկար չեն ապրել, բայց հարուստ եւ ճոխ ժառանգություն են թողել մեզ, որ ապշում ես, թե ինչպես է մարդը կարողացել այսպիսի ահռելի կոթողային գործեր ժառանգել: Օրինակ՝ Տաթևացու «Գիրք Հարցման»-ը կամ քարոզգրքերը, մյուս հայրերի գործերը: Նրանց ժամանակ չի եղել համակարգիչ, որը հիմնականում արագացնում է տպագրական գործը, չի եղել էլեկտրականություն, չեն եղել ժամանակակից այս պայմանները, բայց մարդիկ ունեցել են նվիրում, հավատք եւ գիտակցություն, ժամանակը բավարարել է իրենց: Այսօր բոլոր նպաստավոր պայմանները կան դյուրացնելու աշխատանքը, բայց, կարծեք, ժամանակը չի բավականացնում, որովհետեւ այսօր չկան այդ հավատքը, նվիրումը, գիտակցությունը, դրա համար էլ ժամանակն անտեղի վատնում ենք:

- Ժամանակի անտեղի վատնումը կարելի՞ է նույնացնել մեկ այլ մեղքի՞ ծուլության, անգործության հետ, որը վտանգավոր է մահացու մեղք է համարվում:

- Անշուշտ, որն այսօր տարածված է: Մարդը չունի անելիք եւ սկսում է զբաղվել դատարկ բաներով, բայց նույնիսկ այս պարագայում միշտ կարելի է գտնել զբաղմունք: Հարցն այն է, թե այդ զբաղմունքով դու ավելի մոտենում ես Աստծուն, թե՞ հեռանում Նրանից: Օրինակ՝ ես այսօր անելիք չունեմ, իմ ազատ օրն է, կարո՞ղ եմ այսօր ավելի շատ Աստվածաշունչ կարդալ, այցելել աղքատներին, հիվանդներին, չե՞ որ դա էլ է զբաղմունք: Իսկ ծուլ մեկը կարող է ասել. «Մինչեւ ժամը մեկը կքնեմ, կարթնանամ եւ մի երկու հաղորդում կդիտեմ հեռուստատեսությամբ, հետո կհավաքվենք հարեւաններով, սուրճ կխմենք եւ կսկսենք բամբասել»: Սա էլ կլինի զբաղմունք: Ուրեմն մարդն ինքն է ընտրում իր զբաղմունքը: Զրիստոնեական գիտակցությունից զուրկ մեկը չի կարող մտածել Աստծուն հաճելի լինելու մասին:

- «Ժամանակի հարգն ու արժեքը մեռյալներն են քաջ ճանաչում, որոնք եթե մի վայրկյան իսկ կարողանային վերստին ձեռք բերել, անզին գանձ կհամարեին եւ նրանով բազում օգուտ կստանային իրենց հոգու փրկության համար», - ասում է Պողոս Աղրիանուպոլսեցին: Մեզ՝ ապրողներին, մի տեսակ սթափության կոչ է անում...

- Անշուշտ, ուրեմն մեկը այնպես ապրենք մեր կյանքը եւ տնօրինենք մեր ժամանակը, որ երբեք ու երբեք չզղջանք ու չափստանք, այլ ուրախ լինենք, որ մեր ժամանակը ճիշտ ենք օգտագործել: Այդ ժամանակ միայն գոհ կլինենք մեր կյանքից:

- Ի վերջո, երբ Աստծո առջեւ էլ կանգնելու եւ հաշվետու լինելու պահը գա, չենք ամաչի մեր ընթացքի համար...

- Այո՛, եւ որպես լուսի որդիներ՝ կկարողանանք Զրիստոսին ներկայանալ պարզեղբայր այն գիտակցությամբ, որ ապրեցինք Նրա կամքի համաձայն, եւ ժամանակն է, որ մեր ապրածի վարձատրությունն ստանանք:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբուլյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝ kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 4.3.2013 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ